



Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների
գրասենյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2017թ.-ի ԱՊՐԻԼԻ 2-ի
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Դիտորդական առաքելություն
Վերջնական զեկույց



Վարշավա
10-ը հուլիսի, 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.	ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ	1
II.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ	4
III.	ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ	5
IV.	ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ.....	6
V.	ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	8
VI.	ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	8
VII.	ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ	11
VIII.	ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ	14
IX.	ՔԱՐՈԶԱՐՇԱՎ	16
X.	ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....	19
XI.	ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	21
	Ա. ԶԼՄ ՄԻՋՎԱՅՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ	21
	Բ. ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԼՈՒՍԱՐԱՆՈՒՄ.....	22
XII.	ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ.....	24
XIII.	ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ	27
XIV.	ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԸ	28
	Ա. ՄԵԿՆԱՐԿ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ	28
	Բ. ԶԱՅՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ ԵՎ ԱՂՅՈՒՍԱԿԱՎՈՐՈՒՄ	30
XV.	ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ.....	32
XVI.	ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ	34
	Ա. ԱՌԱՋՆԱԶԵՐԹ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ	34
	Բ. ԱՅԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ.....	35
	ՀԱՎԵԼՎԱԾ I: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....	38
	ՀԱՎԵԼՎԱԾ II: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՑԱՆԿ.....	39
	ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Ի ՄԱՍԻՆ.....	49

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
2017թ.-ի ԱՊՐԻԼԻ 2-ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Դիտորդական առաքելության վերջնական զեկույց¹

I. ԳՈՐԾԱԴԻՐ ԱՍՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության հրավերով ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ) գործուղեց 2017թ-ի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների դիտարկում իրականացնելու համար: Ընտրությունների օրը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն միացավ ԵԱՀԿ Խորհրդարանական վերհաժողովի, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի և Եվրոպական խորհրդարանի պատվիրակություններին՝ կազմելով Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն (ԸՄԴԱ): ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն գնահատեց ընտրական գործընթացի համապատասխանությունը ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին, ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային պարտավորություններին և չափանիշներին, ինչպես նաև ներպետական օրենսդրությանը:

2017թ-ի ապրիլի 3-ին ԸՄԴԱ-ի կողմից հրապարակված «Նախնական հանգամանքների և եզրակացությունների մասին հայտարարությունը» գտել էր, որ ընտրությունները «լավ էին կազմակերպված և հիմնարար ազատությունները ընդհանուր առմամբ պահպանվել էին: Չնայած այն հանգամանքին, որ իրավական դաշտում իրականացվել են ողջունելի բարեփոխումներ եւ նոր տեխնոլոգիաներ են ներդրվել նվազեցնելու ընտրական խախտումների ռիսկերը, ընտրությունները ստվերվեցին ընտրակաշառքների և հանրային ծառայողների ու մասնավոր ընկերությունների աշխատողների վրա ճնշումների մասին արժանահավատ տեղեկություններով: Դա նպաստեց հանրության կողմից ընտրությունների նկատմամբ ընդհանուր վստահության ու հավատի բացակայությանը: Ընդհանուր առմամբ ընտրության օրը հանգիստ էր և խաղաղ, սակայն արձանագրվեցին կազմակերպչական խնդիրներ և գործընթացին անհարկի միջամտություններ, հիմնականում կուսակցությունների ներկայացուցիչների կողմից»:

Համաձայն նոր ընտրական համակարգի, ԱԺ են ընտրվում առնվազն 101 պատգամավոր երկաստիճան համամասնական ընտրակարգով՝ մեկ համապետական և 13 տարածքային ընտրական ցուցակներից: Առաջին անգամը լինելով՝ համակարգը նաև 4 տեղ է սահմանում ազգային փոքրամասնությունների համար: Սահմանադրությունը պահանջում է «կայուն խորհրդարանական մեծամասնության» ձևավորում կառավարություն կազմելու համար, ինչը սահմանված է որպես պատգամավորների ընդհանուր թվի 54 տոկոսը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի գրուցակիցներից շատերը քննադատություններ հնչեցրին նոր ընտրական համակարգի բարդ լինելու վերաբերյալ:

Ընտրությունների իրավական դաշտն ընդգրկուն է, սակայն բարդ: Նոր Ընտրական օրենսգիրքն ընդունվել է մի գործընթացի արդյունքում, որը բնութագրվել է որպես ներառական և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի բազմաթիվ գրուցակիցների կողմից դիտվել որպես քայլ առաջ ընտրական գործընթացի նկատմամբ համընդհանուր վստահություն կառուցելու ուղղությամբ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին մի շարք հանձնարարականներ կատարվել են, թեև որոշ հարցեր հետագա ուշադրության արժանացնելու կարիք ունեն:

¹ Սույն զեկույցի անգլերեն տարբերակը միակ պաշտոնական փաստաթուղթն է: Առկա է հայերեն ոչ պաշտոնական թարգմանություն:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ գրուցակիցներից շատերը նաև մտահոգություն հայտնեցին քվեարկության գործընթացի բարդության, տեղական դիտորդների և լրագրողների տեղամասային կենտրոններում գտնվելու թվի սահմանափակումների և ստորագրված ընտրացուցակների տվյալների մասին անփութությամբ ոչ ճիշտ հաղորդումներ տալու համար քրեական պատժամիջոցների վերաբերյալ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿՀՀ) պահպանել է սահմանված բոլոր իրավական ժամկետները և իր աշխատանքը կատարել արդյունավետորեն՝ թափանցիկության և կոլեգիալության սկզբունքներին համապատասխան: Այն տվել է մի շարք պարզաբանումներ Ընտրական օրենսգրքի վերաբերյալ, հիմնականում ՀԿ-ների դիմումների հիման վրա, և նախաձեռնողական կերպով արձագանքել քարոզարշավի խախտումների դեպքերին: Այնուհանդերձ, ԿՀՀ-ն բողոքներն ամենայն խստությամբ չի քննել: ԿՀՀ-ն վերապատրաստման դասընթացներ է կազմակերպել ստորին օղակի հանձնաժողովների համար և տարածել ընտրողների իրազեկման տարբեր տեսակի տպագիր, տեսա և ձայնանյութեր՝ նվիրված ընտրությունների օրվա նոր ընթացակարգերին, ինչը դրական է գնահատվել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից: Բազմաթիվ գրուցակիցներ վստահություն են հայտնել Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸՀՀ) աշխատանքի նկատմամբ, սակայն Տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏՀՀ) անկողմնակալության վերաբերյալ հնչել են կասկածներ՝ ղեկավար պաշտոնների բաշխումն իշխող կուսակցության օգտին կատարելու պատճառով:

Ընտրողների ցուցակների ճշգրտությունը բարելավվել է առավել արդյունավետ միջգերատեսչական համագործակցության շնորհիվ: Ընտրողների ցուցակում ընդգրկված էր ընդհանուր թվով 2,654,195 ընտրող, ներառյալ նշանակալի թվով արտերկրում բնակվող ընտրողներ: Չնայած օրենքը բավականաչափ մեխանիզմներ է նախատեսում ընտրողների կողմից ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու դիմումներ ներկայացնելու համար, ընտրողների ցուցակները շարունակում էին ներառել հասցեներ, որտեղ մեծ թվով ընտրողներ էին հաշվառված, ինչը իշխանությունների կողմից հետագա ուշադրություն է պահանջում:

Ընտրությունների օրը ընտրողների ինքնությունը ստուգվել է Ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորումների (ԸԳՍ) միջոցով, որոնք աշխատել են արդյունավետ կերպով: Մքանավորվել են ընտրողների մատնահետքերը՝ ԿՀՀ-ին հնարավորություն տալով խաչաձև ստուգումներ իրականացնել բազմակի քվեարկության հնարավոր դեպքերը բացահայտելու համար: Առաջին անգամը լինելով՝ ՏՀՀ-ներից ստացված սքանավորված ստորագրված ընտրացուցակները հրապարակվել են ընտրությունների օրվանից հետո, ինչը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի բոլոր գրուցակիցների կողմից դիտվել է որպես այլ անձի փոխարեն քվեարկության կանխարգելման կարևոր միջոց, չնայած ընտրողների անձնական տվյալների բացահայտման հանգամանքին:

Ներառական գործընթացի շրջանակներում ԿՀՀ-ն գրանցել է հինգ քաղաքական կուսակցությունների և չորս կուսակցությունների դաշինքների թեկնածուների ցուցակները: Որոշ կուսակցություններ / դաշինքներ նշեցին, որ դժվարացել են ազգային փոքրամասնությունների թեկնածուներ գտնել նրանց հատկացված տեղերի համար: Բոլոր մասնակիցները բավարարել են այն պահանջը, ըստ որի թեկնածուների՝ ցանկացած ամբողջ թվով քայակում պետք է լինեն երկու սեռերի ներկայացուցիչներ, և ընդհանուր թվով 1,558 թեկնածուների 30 տոկոսը կանայք էին: Այնուհանդերձ, միայն 18 կին (պատգամավորների 17 տոկոսը) ընտրվեց նոր խորհրդարան:

Քարոզարշավն սկսեց դանդաղ և ակտիվացավ ընտրությունների օրվա մոտենալուն զուգընթաց: Քարոզարշավները հիմնականում ավելի կենտրոնացած էին անհատ թեկնածուների, քան կուսակցությունների ծրագրերի ու քաղաքականության վրա: Մասնակիցները կարողացան լիարժեք կերպով իրականացնել քարոզարշավը, առանց սահմանափակումների, սակայն եղան բռնության առանձին դեպքերի մասին հաղորդումներ: Պետական շատ պաշտոնյաներ արձակուրդ էին վերցրել քարոզարշավն իրականացնելու համար, ինչը դրական է: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի գրուցակիցներից շատերը նշեցին, որ քաղաքական կուսակցությունների, ինչպես նաև թեկնածուների և ընտրողների միջև իրական բանավեճի բացակայությունը սահմանափակել է տեղեկացված ընտրություն կատարելու համար ընտրողներին հասանելի տեղեկատվությունը:

Քարոզարշավի վրա սովեր նետեցին արժանահավատ և համատարած պնդումները, որ տեղի են ունեցել ընտրակաշառքի բաժանման, հանրային ծառայողների, այդ թվում՝ դպրոցների և հիվանդանոցների աշխատակիցների վրա ճնշումներ գործադրելու, ինչպես նաև այս կամ այն կուսակցության օգտին քվեարկելու նպատակով ընտրողներին ահաբեկելու դեպքեր: Դա նպաստեց ընտրական գործընթացի նկատմամբ համընդհանուր հանրային վստահության նվազմանը և առաջացրեց մտահոգություններ առ այն, թե արդյոք ընտրողները կարողացել են իրենց կամքն արտահայտել առանց հաշվեհարդարի վախի, ինչպես պահանջում են ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորությունները:

Քարոզարշավի ֆինանսավորման վերահսկման և հաշվետվությունների վերաբերյալ որոշ իրավական նորմեր ավելի խստացվել էին, սակայն, այսպես կոչված կազմակերպչական, ինչպես օրինակ նախընտրական շտաբերի, տրանսպորտի և հաղորդակցության ծախսերը ներառված չէին հաշվետվություններում, ինչը նվազեցնում էր դրանց թափանցիկությունը: Քարոզարշավի բոլոր մասնակիցները հայտարարագրեր են ներկայացրել արշավի եկամուտների ու ծախսերի մասին, և քարոզարշավի ֆինանսավորման որևէ խախտում չի հայտնաբերվել ԿԸՀ-ի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից, որը, սակայն, հաշվետվությունների ճշգրտությունը պրոակտիվ կերպով չի ստուգել:

Խոսքի ազատությունը երաշխավորված է Սահմանադրությամբ: Այնուհանդերձ, լրատվամիջոցների սեփականատերերի անհարկի միջամտությունը խմբագրական անկախությանը հանգեցրեց լրագրողների կողմից ինքնազրաքննության կիրառման և կառավարության գործունեության քննադատական լուսաբանումից խուսափելուն, այդ թվում՝ Հանրային հեռուստաընկերությամբ: Դրական է, որ չկա միջամտություն համացանցի ազատությանը, ինչը նպաստում է լրատվամիջոցներում առավել մեծ քաղաքական բազմակարծությանը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ իրականացրած ՁԼՄ մշտադիտարկումը ցույց տվեց, որ հանրային հեռուստաընկերությունը քարոզարշավի ընթացքում իր լրատվական թողարկումների շրջանակներում հավասար լուսաբանում է իրականացրել մասնակիցներից յուրաքանչյուրի դեպքում:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի գրուցակիցների մեծ մասը մատնանշեց, որ հասարակության մեջ շարունակվում է խուսափողականությունը ընտրական խախտումների ու կեղծիքների մասին հաղորդում տալու հարցում, ինչը պայմանավորված է բողոքների քննման արդյունավետության նկատմամբ անվստահությամբ: Դատական համակարգի, ընտրական վարչարարության և իրավապահ մարմինների անկախության պակասը և նրանց կողմից բողոքները քննելու եղանակը խաթարում են իրավական պաշտպանության արդյունավետությունը, ինչը հակասում է ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին և Եվրոպայի Խորհրդի չափանիշներին:

Միջազգային և տեղական դիտորդների գործունեությունը թույլատրվում է, և կուսակցությունների վստահված անձինք կարող են ներկա գտնվել տեղամասային կենտրոններում: ԿԸՀ-ն հավատարմագրել է ընդհանուր թվով 28,021 տեղական դիտորդների: Լրատվամիջոցներն ու քաղաքացիական հասարակությունը քննադատության են ենթարկել տեղամասային կենտրոններում տեղական դիտորդների և ՋԼՄ ներկայացուցիչների թվի ընտրողաբար սահմանափակման իրավական մեխանիզմները: Բացի այդ, միջազգային ՀԿ-ները ընտրությունների դիտարկման հրավեր չեն ստացել, ինչը հակասում է ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին:

Ընտրությունների օրն ընդհանուր առմամբ անցել է հանգիստ և խաղաղ: Քվեարկության ընթացակարգերը հիմնականում պահպանվել են: Այնուհանդերձ, քվեարկության ընթացքում արձանագրվել են կուտակումներ, երկար հերթեր և կուսակցությունների ներկայացուցիչների ու ոստիկանության կողմից միջամտության դեպքեր: Թույլատրվել են մարդկային կուտակումները տեղամասային կենտրոնների առջև, ինչը հակասում է օրենքին: Ըստ բազմաթիվ դիտարկումների, ընտրողները դժվարացել են ըմբռնել քվեարկության կարգը, արձանագրվել են խմբակային քվեարկության և ընտրողների վրա ներգործելու դեպքեր: Ձայների հաշվարկն իրականացվել է թափանցիկության պայմաններում, բայց շատ դեպքերում բացասական է գնահատվել, հիմնականում կուսակցությունների ներկայացուցիչների միջամտության, ինչպես նաև որոշ ընթացակարգային բացթողումների պատճառով: ԸՄԴԱ դիտորդներն աղյուսակավորման գործընթացը մեծամասամբ դրական են գնահատել:

Վերահաշվարկի բոլոր դիմումները մերժվել են ընթացակարգային խախտումների հիմքերով, ինչպես և մերժվել են ԿԸՀ և վարչական դատարան ներկայացված բոլոր հետագա բողոքները: Ապրիլի 14-ին ընտրությունների արդյունքները բողոքարկվեցին Սահմանադրական դատարան, որն ուժի մեջ թողեց ընտրությունների արդյունքների մասին ԿԸՀ որոշումը՝ պատճառաբանելով, որ բողոքը մեծամասամբ փաստարկված չէր: Դատարանն այնուհանդերձ շեշտեց, որ անհրաժեշտ է լուծում տալ դիմումատուների բարձրացրած խնդիրներին, մասնավորապես կապված ընտրակաշառքի, տեղամասերում ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչման գործընթացի և ընտրական վեճերի քննման ընթացակարգի հստակության պակասի հետ:

Մույն զեկույցը մի շարք հանձնարարականներ է տալիս ի աջակցություն Հայաստանում ընտրությունները ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորությունների և ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային պարտավորությունների ու չափանիշների հետ ներդաշնակեցնելու հետագա ջանքերի: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը պատրաստակամություն է հայտնում աջակցել իշխանություններին ընտրական գործընթացի բարելավման և սույն ու նախկին զեկույցներում տրված հանձնարարականների կատարման հարցում:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Հայաստանի Հանրապետության վարչապետի հրավերով և 2016թ.-ի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 2-ը իրականացված Կարիքների գնահատման առաքելության հանձնարարականների հիման վրա, փետրվարի 20-ին ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ) գործուղեց Հայաստան: ԸԴԱ-ն, որը ղեկավարում էր դեսպան Յան Պետերսենը, կազմված էր Երևանում տեղակայված 14 անդամից բաղկացած թիմից և 28 երկարաժամկետ դիտորդներից, որոնք մարտի 1-ին գործուղվել էին ողջ հանրապետության

տարածք: ԸՂԱ-ն Հայաստանում մնաց մինչև ապրիլի 14-ը՝ հետևելու հետընտրական զարգացումներին:

Ընտրությունների օրը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ին միացան ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի և Եվրոպական խորհրդարանի պատվիրակությունները՝ կազմելով Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն (ԸՄԴԱ): Պ. Խոսե Իգնասիո Սանչես Ամորը ԵԱՀԿ գործող նախագահի կողմից նշանակվեց հատուկ համակարգող և ԵԱՀԿ-ի կարճաժամկետ դիտորդական առաքելության ղեկավար: Պ. Գայր Յորգեն Բեկեվոլդը ղեկավարում էր ԵԱՀԿ ԽՎ պատվիրակությունը: Տ. Լիլիան Մորի Պասքին ղեկավարում էր ԵԽԽՎ պատվիրակությունը: Տ. Հեյդի Հաուտալան ղեկավարում էր Եվրոպական խորհրդարանի պատվիրակությունը: ԸՄԴԱ-ում ներգրավված հաստատություններից յուրաքանչյուրը ստորագրել է 2005թ.-ի Ընտրությունների միջազգային դիտարկման սկզբունքների հռչակագիրը: Տեղակայվել է ընդամենը 439 դիտորդ 41 երկրից, այդ թվում՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից գործուղված 340 երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդները, ինչպես նաև ԵԱՀԿ ԽՎ՝ 63, ԵԽԽՎ՝ 24 և Եվրոպական խորհրդարանի 12 անդամից կազմված պատվիրակությունները: Տեղամասային կենտրոններում քվեարկության մեկնարկի ընթացակարգերը դիտարկվել են 2,009-ը տեղամասից 148-ում, քվեարկությունը դիտարկվել է 1,534, հաշվարկը՝ 164 տեղամասերում, իսկ աղյուսակավորումը՝ բոլոր 38 ԸԸՀ-ներում:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն գնահատել է ընտրական գործընթացների համապատասխանությունը ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին, ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային պարտավորություններին և չափանիշներին, ինչպես նաև ներպետական օրենսդրությանը: Սույն վերջնական զեկույցը հաջորդում է «Ընտրությունների նախնական հանգամանքների և եզրակացությունների մասին հայտարարությանը», որը հրապարակվել էր ապրիլի 3-ին Երևանում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ:²

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը շնորհակալություն է հայտնում իշխանություններին ընտրությունների դիտարկման հրավերի համար և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ու Արտաքին գործերի նախարարությանը՝ իրենց աջակցության և համագործակցության համար: Այն նաև շնորհակալ է քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության, ՋԼՄ-ների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին և այլ գրուցակիցներին իրենց կարծիքները կիսելու համար:

III. ՆԱԽԱԴԲՅԱԼՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

2015թ.-ի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրական բարեփոխումների արդյունքում Հայաստանը կիսանախագահական քաղաքական համակարգից անցում է կատարում խորհրդարանական համակարգի: Նշված բարեփոխումները սահմանափակում են նախագահի լիազորությունները հոգուտ վարչապետի և խորհրդարանի, ինչպես նաև ընտրական համակարգը մեծամասնականից փոխվում է առավելապես համամասնականի՝ տարածքային ցուցակներով:³ Այս ընտրություններն առաջինն են, որ անցկացվել են նոր քաղաքական համակարգի ներքո:

² Տե՛ս՝ բոլոր նախկին [ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցները Հայաստանի վերաբերյալ](#):

³ Տե՛ս՝ Եվրոպայի Խորհրդի Վենետիկի հանձնաժողովի [Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ կարծիքը](#): 2018թ.-ին պաշտոնավարման ավարտից հետո նախագահն անուղղակիորեն կընտրվի խորհրդարանի կողմից 7 տարի ժամկետով:

2012թ.-ի վերջին խորհրդարանական ընտրությունների ժամանակ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) ստացել էր 69 տեղ և ձևավորել կառավարություն: 2016թ.-ին այն ստորագրեց համաձայնագիր, որով կռալիցիա կազմեց խորհրդարանում հինգ տեղ զբաղեցնող Հայ Հեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) հետ: Խորհրդարանական ընդդիմությունը կազմված էր 33 տեղ զբաղեցնող Բարգավաճ Հայաստան կուսակցությունից (ԲՀԿ), 7 տեղ զբաղեցնող Հայ Ազգային Կոնգրեսից, 5 տեղ զբաղեցնող Հայկական Վերածնունդից և 4 տեղ զբաղեցնող Ժառանգություն կուսակցությունից:⁴

IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Խորհրդարանական ընտրությունները կարգավորվում են ընդգրկուն իրավական դաշտով, որը հիմնականում բաղկացած է 1995թ.-ի Սահմանադրությունից (վերջին բարեփոխումը՝ 2015թ.-ին) և 2016թ.-ի Ընտրական օրենսգրքից: Իրավական դաշտը ներառում է նաև ՀՀ օրենքները «Քաղաքական կուսակցությունների» և «Հավաքների ազատության մասին», ՀՀ Քրեական օրենսգիրքը, Վարչական դատավարության օրենսգիրքը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, ՀՀ օրենքը «Սահմանադրական դատարանի մասին»⁵ և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) որոշումները: Հայաստանը նաև կողմ է հանդիսանում ժողովրդավարական ընտրություններին առնչվող հիմնական միջազգային և տարածաշրջանային իրավական գործիքների:⁶

Ինչպես պահանջվում էր բարեփոխված Սահմանադրությամբ, նոր Ընտրական օրենսգիրք ընդունվեց ընտրությունների օրվանից առնվազն մեկ տարի առաջ:⁷ Ընտրական բարեփոխումների գործընթացը բնութագրվել է որպես ներառական և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ի բազմաթիվ զրուցակիցների կողմից դիտվել որպես քայլ առաջ ընտրական գործընթացի նկատմամբ համընդհանուր վստահություն կառուցելու ուղղությամբ: Փոփոխությունները հաստատվել են իշխող կռալիցիայի և ընդդիմության պատգամավորների զգալի մեծամասնության կողմից:⁸ Հասարակական կազմակերպությունները մասնակցել են Ընտրական օրենսգրքի նախագծի քննարկումներին, սակայն հավանություն չեն տվել

⁴ 2015թ.-ին Օրինաց Երկիր կուսակցությունը վերանվանվեց «Հայկական Վերածնունդ», բայց իր խորհրդարանական խմբակցությունը պահպանեց նախկին անվանումը:

⁵ Օրենսդրության մեծ մասը փոփոխվել է Ընտրական օրենսգրքի հետ ներդաշնակեցնելու համար: Սակայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը դեռևս հղում է կատարում հին ընտրական համակարգին:

⁶ Այդ թվում՝ 1966թ.-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ), 1965թ.-ի Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան, 1979թ.-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW), 2003թ.-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան, 2006թ.-ի ՄԱԿ-ի Կոնվենցիան հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին (CRPD) և 1950թ.-ի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան: Հայաստանը նաև անդամակցում է Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովին և Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբին (ԳԲԵԿՈ):

⁷ Վենետիկի հանձնաժողովի 2002թ.-ի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» II.2.բ մասում ասվում է, որ «ընտրական օրենսդրության հիմնական բաղադրիչները, մասնավորապես ընտրական համակարգը, ընտրական հանձնաժողովների անդամակցությունը և ընտրատարածքների սահմանների հաստատումը բարեփոխումների ենթակա չպետք է լինեն ընտրություններին նախորդող առնվազն մեկ տարվա ընթացքում»:

⁸ Մայիսի 25-ի Ընտրական օրենսգրքն ընդունվել է 131 պատգամավորից 102-ի կողմ քվեարկության արդյունքում, հունիսի 30-ի փոփոխություններն ընդունվել են 101 կողմ քվեարկած ձայնով, իսկ հոկտեմբերի 20-ի փոփոխությունները՝ 103 կողմ քվեարկած ձայնով:

վերջնական տեքստին, քանի որ տեղական դիտորդների նկատմամբ սահմանափակումները մեղմելու իրենց պահանջները չէին բավարարվել:

Նոր Ընտրական օրենսգիրքը հաշվի է առել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախկին մի շարք հանձնարարականներ:⁹ Այն նախատեսում է ընտրողների ինքնության ստուգման բարելավված կարգ, ընտրական իշխանությունների անկախությունն ամրապնդող միջոցներ, վերացնում է տեղական դիտորդների համար նախատեսված պարտադիր թեստը և ավելացնում գենդերային քվոտաները թեկնածուների ցուցակներում: Օրենսգիրքը նաև նախատեսում է ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակում և քվեարկության օրը Ընտրողների գրանցման տեխնիկան սարքավորումների (ԸԳՍ) ու վեր տեսախցիկների կիրառում՝ որպես ընտրողների ինքնության ստուգումը դյուրացնելու և բազմակի քվեարկության, այլ անձի փոխարեն քվեարկության և այլ ընտրակեղծիքների կանխարգելման միջոց:

Այնուհանդերձ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին մի շարք այլ հանձնարարականներ դեռևս մնում են անտեսված, այդ թվում՝ այնպիսիք, որ վերաբերվում են ընտրական հարցերով բողոքներ բերելու իրավունքը նեղ սահմանող կանոններին, թեկնածուների քաղաքացիության և մշտական բնակության հետ կապված պահանջներին, ինչպիսիք առկա են Սահմանադրությունում, դաշինքների համար սահմանված խորհրդարան անցնելու բարձր ընտրական արգելապատնեշին, ազգային փոքրամասնությունների թեկնածուների ցուցակների ձևավորմանը և քարոզարշավի ֆինանսավորման հայտարարագրից կազմակերպչական ծախսերի բացակայությանը:

Թեև վերջին որոշ փոփոխություններ մասամբ հստակեցրել են քարոզարշավի իրականացման և ֆինանսավորման հետ կապված՝ մինչ այդ խնդրահարույց դրույթներ, դրանք լիարժեք կերպով չեն բավարարել նախկին հանձնարարականների պահանջները: Դա վերաբերվում է նաև քարոզարշավի կանոնների խախտման համար սահմանված հստակ, աստիճանական և համաչափ պատժամիջոցների պակասին¹⁰ և նախընտրական շտաբերի՝ պետական և ՏԻ մարմիններին պատկանող շենքերում տեղակայելու հարցին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ որոշ գրուցակիցներ նաև մտահոգություն հայտնեցին քվեարկության բարդ ընթացակարգերի, տեղամասերում տեղական դիտորդների և լրագրողների գտնվելու թվի սահմանափակումների և ստորագրված ընտրացուցակների տվյալների մասին անփութությամբ ոչ ճիշտ հաղորդումներ տալու համար քրեական պատժամիջոցների վերաբերյալ:¹¹

Հետագա ջանքեր են հարկավոր իրավական դաշտի բարեփոխման համար, սույն զեկույցում, ինչպես նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականներում մատնանշված բացերն ու երկիմաստությունները շտկելու նպատակով: Յանկացած բարեփոխում պետք է հիմնվի լայն շրջանակով խորհրդակցությունների վրա և ընդունվի հաջորդ ընտրություններից բավականաչափ ժամանակ առաջ:

⁹ Տե՛ս՝ [ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի համատեղ կարծիքը ՀՀ ընտրական օրենսդրության վերաբերյալ](#):

¹⁰ Ընտրական օրենսգիրքը նախատեսում է միայն նախազգուշացում կամ գրանցման անվավեր ճանաչում: Օրենքը չի կարգավորում այն հարցը, թե քանի նախազգուշացումից հետո է անվավեր ճանաչվում գրանցումը: Բացի այդ, որոշ ընտրական հանձնաժողովներ միասնական դիրքորոշում չեն ունեցել նախազգուշացումների հարցում, և արվել են անհամապատասխան գրավոր ու բանավոր նախազգուշացումներ:

¹¹ Անփութությամբ սխալ հաղորդման համար հնարավոր պատիժը ներառում է 2-ից 5 տարվա ազատազրկում:

V. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Նոր ընտրական համակարգը բարդ է: Խորհրդարան է ընտրվում առնվազն 101 պատգամավոր երկաստիճան համամասնական կարգով՝ մեկ համապետական և 13 տարածքային ընտրական ցուցակներից: Քվեաթերթիկը բաղկացած է երկու մասից, որոնցից մեկը փակ համապետական ցուցակի համար է, իսկ մյուսը՝ բաց տարածքային ցուցակի համար: Տարածքային թեկնածուները պետք է ընդգրկված լինեն նաև համապետական ցուցակներում: Ընտրողը, համապետական ցուցակ ընտրելուց բացի, կարող է նաև նախապատվություն տալ տարածքային թեկնածուներից որևէ մեկին:

Խորհրդարանում մանդատների բաշխմանը մասնակցելու համար քաղաքական կուսակցությունները պետք է հաղթահարեն հինգ տոկոսի, իսկ կուսակցությունների դաշինքները՝ յոթ տոկոսի արգելապատնեշը: Մանդատները նախ բաշխվում են մասնակիցների միջև, ըստ ողջ երկրի մասշտաբով ստացված առավելագույն թվով քվեների: Այնուհետև մանդատների կեսը տրվում է համապետական ցուցակին ըստ թեկնածուների հերթականության, իսկ մյուս կեսը՝ տարածքային ցուցակներին, ըստ թեկնածուների ստացած քվեների թվի: Այն թեկնածուները, որոնք մանդատներ են ստանում տարածքային ցուցակներից, հանվում են համապետական ցուցակից:

Համակարգը, առաջին անգամը լինելով, նաև նախատեսում է առավելագույնը մինչև չորս տեղ ամենամեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնությունների համար (եզդի, ռուս, ասորի, քուրդ): Մասնակիցներից յուրաքանչյուրը կարող է համապետական ցուցակում ունենալ երկրորդ մաս՝ յուրաքանչյուր ազգային փոքրամասնությունից թեկնածուներով: Եթե մասնակցող կուսակցությունը կամ դաշինքը չունի փոքրամասնության թեկնածու, տեղն անցնում է հաջորդ առավելագույն թվով ձայներ ստացած կուսակցությանը, որն ունի փոքրամասնության թեկնածու:

Համաձայն Սահմանադրության, կառավարություն կազմելու համար պետք է ձևավորել «կայուն խորհրդարանական մեծամասնություն» (տեղերի 54 տոկոսը):¹² Եթե կայուն մեծամասնություն չի ձևավորվում ընտրությունների արդյունքում, կամ արդյունքների ամփոփումից հետո վեց օրվա ընթացքում կոալիցիա կազմելու ճանապարհով, կազմակերպվում է ընտրությունների երկրորդ փուլ երկու առավելագույն թվով քվեներ ստացած ցուցակների միջև, քվեարկության օրվանից հետո 28-րդ օրը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ որոշ գրուցակիցներ քննադատություններ են հնչեցրել առ այն, որ ընտրական համակարգը բարդ է և շեղվել է գուտ համամասնական կարգից, ինչպես նաև մտահոգություն հայտնել, որ բավականաչափ ջանքեր չեն գործադրվել բարձրացնելու հանրային վստահությունը ստացած քվեների հիման վրա մանդատների բաշխման կարգի նկատմամբ:

VI. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրությունների վարչարարությունն իրականացվել է եռաստիճան համակարգով՝ բաղկացած ԿԸՀ-ից, 38 ԸԸՀ-ներից (Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով) և 2,009 ՏԸՀ-ներից (Տեղամասային ընտրական հանձնաժողով): ԿԸՀ-ն մշտական հիմունքներով գործող

¹² Լրացուցիչ մանդատներ կարող են բաշխվել ձայների բացարձակ մեծամասնություն ստացած կուսակցությանը կամ դաշինքին «կայուն խորհրդարանական մեծամասնություն» ձևավորելու համար:

արհեստավարժ մարմին է, որը պատասխանատու է ընտրությունների ընդհանուր անցկացման համար: Այն ունի լայն լիազորություններ, այդ թվում՝ թեկնածուների ցուցակների գրանցում, ստորին օղակի հանձնաժողովների վերապատրաստման դասընթացների անցկացում և քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողություն: Հանձնաժողովը բաղկացած է Ազգային Ժողովի կողմից վեց տարի ժամկետով ընտրվող յոթ անդամներից: ԿԸՀ բոլոր անդամները վերընտրվել են 2016թ.-ի հոկտեմբերին՝ ԱԺ-ում ձայների ճնշող մեծամասնությամբ:¹³

ԿԸՀ-ն աշխատել է թափանցիկության, կոլեգիալության և արդյունավետության սկզբունքներով, օրենքով սահմանված ժամկետների շրջանակներում, այնուհանդերձ, այն ամենայն խստությամբ չի քննել բողոքները (տե՛ս՝ *Դիմումներ և բողոքներ*): ԿԸՀ-ի նիստերին ներկա են գտվել դիտորդներ, ԶԼՄ-ների և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, և դրանք հեռարձակվել են առցանց: ԿԸՀ որոշումներն ու նիստերի օրակարգերը ժամանակին տեղադրվել են վերջինիս վեբ կայքում:¹⁴ ԿԸՀ-ն ընդունել է ԸԸՀ-ների և ՏԸՀ-ների կանոնակարգերը և դիտորդների ու վստահված անձանց գործունեության ուղեցույցներ: Ինչպես պահանջվում է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հանձնարարականներով, Ընտրական օրենսգիրքը լիազորում է ԿԸՀ-ին ընդունել իրավականորեն պարտավորեցնող հրամաններ և կանոններ օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու համար: Սակայն փոխարենը ԿԸՀ-ն ավելի ցածր օղակի հանձնաժողովներին տվել է պարզաբանումներ, որոնք չեն համարվել պարտավորեցնող, ինչը նվազեցրել է իրավական որոշակիությունը:¹⁵

Օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու և ստորին օղակի հանձնաժողովներին բավարար ուղղորդում տրամադրելու համար ԿԸՀ-ն օրենքի դրույթների պարզաբանումներ պետք է տրամադրի իրավականորեն պարտավորեցնող որոշումների միջոցով:

ԿԸՀ-ն կազմել և տարածել է ընտրությունների օրվա նոր ընթացակարգերի վերաբերյալ ընտրողների իրազեկման տարատեսակ տպագիր, տեսա և ձայնանյութեր, որոնց որակը դրական է գնահատվել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից: Նյութեր են տրամադրվել նաև զգայական հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևաչափերով:¹⁶ Այնուհանդերձ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն նկատեց, որ տպագիր նյութերի տարածումը բավականաչափ լայն շրջանակով չի կատարվել հեռավոր տարածքներում բնակվող մարդկանց հասնելու համար: Բացի այդ, որոշ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ ափսոսանք են հայտնել փոքրամասնությունների լեզուներով իրազեկման նյութերի պակասի կապակցությամբ:

¹³ ԿԸՀ-ի կազմը քաղաքացիական հասարակության մոտ մտահոգությունների տեղիք է տվել նրա՝ անցյալ ընտրությունների ժամանակ ենթադրյալ վատ աշխատանքի պատճառով: 17 ՀԿ-ներ ԿԸՀ-ի նշանակումը քննադատող [համատեղ հայտարարություն](#) են հրապարակել:

¹⁴ ԿԸՀ նորմատիվ որոշումները վեբ կայքում հրապարակվում են Արդարադատության նախարարությունում դրանց պետական գրանցման օրը, որը 15 օր ունի այդ որոշումներն ուսումնասիրելու համար: Արդյունքում որոշ ԿԸՀ որոշումներ վեբ կայքում հայտնվեցին ընդունման օրվանից մեկ շաբաթ անց:

¹⁵ Մարտի 28-ին վարչական դատարանը որոշեց, որ քվեաթերթիկների անվավեր ճանաչման վերաբերյալ ԿԸՀ պարզաբանումները պարտավորեցնող ուժ չունեն և հետևաբար բողոքարկման ենթակա չեն: ԿԸՀ-ն նույնպես տեղեկացրեց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իր պարզաբանումները պարտավորեցնող չեն ՏԸՀ-ների համար: 2002թ.-ի Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» II.2.ա մասը նշում է, որ «բացի տեխնիկական հարցերին առնչվող կանոններից և մանրամասներից, որոնք կարող են ներառվել գործադիր մարմնի կանոնակարգումների մեջ, ընտրական իրավունքի կանոնները պետք է առնվազն կանոնադրության կարգավիճակ ունենան»:

¹⁶ Տեսանյութերում տրամադրվում էր նշանների լեզվով թարգմանություն: Քվեարկության ընթացակարգերի ուղեցույցները տպագրված էին մեծ տառատեսակով և բրայլյան այբուբենով:

ԿԸՀ-ն պետք է առավել մեծ ջանքեր ներդնի ընտրողների բոլոր խմբերին լայնորեն մատչելի և ընդգրկուն իրազեկման նյութեր տրամադրելու գործում՝ ներառելով տարբեր տիպի հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնություններին և հեռավոր շրջանների բնակիչներին:

ԸՀ-ները, որոնք կազմավորվել են 2016թ.-ին, արհեստավարժ մարմիններ են՝ կազմված ԿԸՀ-ի կողմից վեց տարի ժամկետով նշանակվող անդամներից:¹⁷ ԸՀ-ները պատասխանատու են ՏԸՀ-ների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, վերջիններիս դեմ ուղղված բողոքները քննելու, ձայների վերահաշվարկի և արդյունքների աղյուսակավորման համար: ԸՀ-ներն ընդհանուր առմամբ աշխատել են արդյունավետ կերպով, սահմանված ժամկետներում, և բազմաթիվ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցներ վստահություն են հայտնել նրանց աշխատանքի նկատմամբ:

ՏԸՀ-ները, որոնք պատասխանատու են քվեարկության կազմակերպման և ձայների հաշվարկի համար, կազմավորվել են մարտի 11-ին:¹⁸ ՏԸՀ նախագահների և քարտուղարների պաշտոնները համամասնորեն բաշխվել են կուսակցությունների միջև ըստ Ազգային Ժողովում նրանց ունեցած մանդատների թվի, որի արդյունքում ՀՀԿ-ն նախագահ կամ քարտուղար է ունեցել 2,009-ը ՏԸՀ-ներից 1,786-ում:¹⁹ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի որոշ զրուցակիցներ մտահոգություն են հայտնել, որ ղեկավար պաշտոնների բաշխման բանաձևը անհարկիորեն նպաստում է իշխող կուսակցությանը, ինչը բացասաբար է անդրադարձնում ՏԸՀ-ների անկախության և անկողմնակալության հանրային ընկալման վրա:²⁰

ՏԸՀ ղեկավար պաշտոնների բաշխման կարգը կարող է վերանայվել վերջիններիս անկախությունն ու անկողմնակալությունը բարձրացնելու համար:

ՏԸՀ-ների համար ԿԸՀ կողմից կազմակերպված վերապատրաստումների որակը ընդհանուր առմամբ դրական է գնահատվել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից: Որոշ ՏԸՀ անդամների փոխարինումը նրանց վերապատրաստումից հետո, նոր ընտրական ընթացակարգերի բարդության հետ միասին, ազդել են ՏԸՀ-ների՝ ընտրությունների արդյունավետ վարչարարություն իրականացնելու կարողության վրա:

Կանայք լավ էին ներկայացված ընտրական վարչարարությունում: ԿԸՀ յոթ անդամներից երեքը կանայք են, այդ թվում՝ նախագահի տեղակալը: Կանայք կազմել են ԸՀ անդամների 35 տոկոսը, սակայն միայն 16 տոկոսն էր ղեկավար պաշտոններ զբաղեցնում:²¹ ԸՄԴԱ դիտորդները

¹⁷ ԸՀ անդամներն ընտրվում են ինքնառաջադրված՝ անհրաժեշտ որակավորումներին համապատասխանող ընտրողներից:

¹⁸ Յուրաքանչյուր խորհրդարանական կուսակցություն նշանակել է մեկական անդամ յուրաքանչյուր ՏԸՀ-ում, իսկ համապատասխան ԸՀ-ն նշանակել է 2 անդամ:

¹⁹ Մինչ ՀՀԿ-ն 1,250 ՏԸՀ-ներում զբաղեցնում էր ղեկավար պաշտոններից որևէ մեկը, մյուս խորհրդարանական կուսակցություններն ունեցել են յուրաքանչյուրը 300-ից ոչ ավել պաշտոն:

²⁰ 1996թ.-ի ՔՔԻԿ-ի՝ ՔՔԻՄԴ-ի թիվ 25 Ընդհանուր մեկնաբանության 20-րդ պարբերությունով պահանջվում է, որ «կազմվի անկախ ընտրական մարմին, որը կվերահսկի ընտրական գործընթացը և կապահովի, որ այն ընթանա արդար, անկողմնակալ և համաձայն ընդունված օրենքների, որոնք համահունչ են Դաշնագրին»: Տե՛ս նաև 2002թ.-ի՝ «Ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» ԱՊՀ Կոնվենցիայի հոդված 19.2(ժ)-ն:

²¹ Յուրաքանչյուր ԸՀ-ի անդամներից առնվազն երկուսը պետք է լինեն մյուս սեռից: ՏԸՀ-ների համար գենդերային պահանջներ սահմանված չեն:

հաղորդել էին, որ ՏՀՀ-ների կազմում կանայք ավելի շատ էին ներկայացված (մոտ 57 տոկոս, ներառյալ իրենց այցելած ՏՀՀ-ների նախագահների 39 տոկոսը):²²

VII. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Քվեարկության օրվա դրությամբ բոլոր 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները ունեն ընտրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ: Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ընտրելու իրավունքի սահմանափակումը հակասում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների 2006թ.-ի կոնվենցիային, ըստ որի նման անձանց քվեարկության իրավունքը չպետք է սահմանափակվի՝ անկախ հաշմանդամության տեսակից:²³ Ի հետևումն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականների, նոր Սահմանադրությունը ոչ ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց տրամադրում է ընտրելու իրավունք:

Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի սահմանափակումները պետք է վերացվեն:

Ընտրողների գրանցումը պահիվ է. ընտրողների ցուցակները հիմնվում են Բնակչության պետական ռեգիստրի վրա, որը վարվում է ՀՀ Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչության կողմից և ներառում Հայաստանում պաշտոնապես մշտական բնակություն ունեցող բոլոր ընտրողներին:²⁴ Այս ընտրությունների ժամանակ ընտրողների վերջնական թիվը եղել է 2,588,468, որոնց մեջ եղել են նշանակալի թվով արտերկրում բնակվող, բայց Հայաստանում պաշտոնական բնակությունը պահպանող ընտրողներ:²⁵ Չնայած օրենքը պահանջում է, որ վեց ամսից ավելի արտերկրում բնակվելու դեպքում անձն այդ մասին գրավոր տեղեկացնի համապատասխան ղեկավարությանը կամ հյուպատոսությանը, շատերը դա չեն անում և ուստի մնում են Ընտրողների պետական ռեգիստրում ըստ իրենց վերջին բնակության վայրի: Հատուկ ցուցակներ են կազմվում զինծառայողների և ձերբակալված կամ կալանավորված անձանց համար:²⁶

²² ԿՀՀ-ն ՏՀՀ-ների կազմի գենդերային համամասնության վերաբերյալ տվյալներ չի պահպանել:

²³ Կոնվենցիայի 12 և 19-րդ հոդվածները: Տե՛ս նաև 2013թ.-ի Կոնվենցիայի Կոմիտեի թիվ. 4/2011 Հաղորդագրի 9.4 պարբերությունը (*Zsolt Bujdosó and five others v. Hungary Չոլտ Բույդոսոն և հինգ այլք ընդդեմ Հունգարիայի*), որտեղ նշվում է, որ «29-րդ հոդվածը հաշմանդամություն ունեցող անձանց որևէ խմբի համար որևէ ողջամիտ սահմանափակում չի նախատեսում, ոչ էլ թույլատրում է որևէ բացառություն: Ուստի ենթադրյալ կամ իրական ֆիզիկական կամ մտավոր որևէ հաշմանդամության հիմքով ընտրական իրավունքից զրկելը, ներառյալ այն որևէ անհատական գնահատականի հիման վրա սահմանափակելը հանդիսանում է խտրականություն հաշմանդամության հիմքով՝ կոնվենցիայի 2-րդ հոդված իմաստով»: ԵԱՀԿ Մոսկվայի փաստաթղթի 41.1 պարբերությունն անդամ երկրներին պարտավորեցնում է «երաշխավորել հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքների պաշտպանությունը»:

²⁴ Մշտական գրանցում չունեցող և անօթևան ընտրողները կարող են գրանցվել քվեարկելու համար, եթե դիմեն ԱՎՎ: Այս ընտրությունների ժամանակ այդպես է արել ընդհանուր թվով 915 անձ:

²⁵ 2011թ.-ի մարդահամարի տվյալներով Հայաստանում փաստացի բնակվում է 18 տարին լրացած 2,190,686 քաղաքացի: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից իրականացված ընտրացուցակների որոշ տեղային ստուգումներ բացահայտեցին, որ շատ բնակարաններում / տներում հաշվառված էին քաղաքացիներ, ովքեր իրականում արտագաղթել էին:

²⁶ Ընտրություններին մասնակցելու համար գրանցվել էր 1,480 նախնական կալանքի տակ գտնվող կամ դատապարտված անձ: Ըստ օրենքի, զինծառայող ընտրողների և նրանց թվի մասին տվյալները չեն հրապարակվում:

Միջգերատեսչական համագործակցության բարելավումը, այդ թվում՝ Արդարադատության նախարարության և ԱՎՎ տեղեկատվական համակարգերի ինտեգրումը, նպաստեցին ընտրացուցակների ճշգրտմանը, մասնավորապես մահացած անձանց ընտրացուցակներից հանելուն: Ընտրական օրենսգիրքը բավարար մեխանիզմներ է նախատեսում, որպեսզի ընտրողները կարողանան ԱՎՎ-ից պահանջել ուղղել անճշտությունները:²⁷ Այնուհանդերձ ընտրացուցակներում դեռևս առկա են այնպիսի հասցեներ, որտեղ մեծ թվով ընտրողներ են հաշվառված:²⁸ Համաձայն ԱՎՎ-ի, շատ դեպքերում դա տեղի է ունեցել հասցեների բազայի թերությունների պատճառով, ինչպես օրինակ «ապօրինի» շինությունների պարագայում, որոնց պաշտոնական հասցե չի կարող հատկացվել:

Տարբեր կառավարական մարմինների միջև համագործակցությունը՝ ուղղված ամբողջական հասցե չունեցող ընտրողների թվի կրճատմանը, պետք է շարունակվի ընտրողների տվյալների ճշգրտության հետ կապված դեռևս առկա խնդիրների լուծման նպատակով:

Ի պատասխան ընդդիմության և ՀԿ-ների վաղուց հնչող խնդրանքների և ընտրությունների օրը այլ անձի փոխարեն քվեարկելու դեպքերի կանխման նպատակով նշանակալի միջոցառումներ են ձեռնարկվել ընտրողների գրանցման գործընթացի թափանցիկությունը մեծացնելու համար: Ինչպես պահանջվում է օրենքով, փետրվարի 21-ին և մարտի 30-ին նախնական և վերջնական ընտրացուցակները հրապարակվել են տեղամասային կենտրոններում, ինչպես նաև ԱՎՎ վեբ կայքում հանրության կողմից ծանոթացման համար: Բացի այդ, ընտրություններից հետո՝ ապրիլի 4-ին, ԿՀՀ-ն հրապարակեց բոլոր ՏՀՀ-ներից ստացված սքանավորված ստորագրված ընտրացուցակները՝ թույլ տալով հանրությանը ստուգել, թե ով է քվեարկել, այդ թվում՝ ենթադրաբար արտասահմանում գտնվողների պարագայում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ բոլոր զրուցակիցները դա դիտել են որպես հնարավոր կեղծիքների կանխման շատ կարևոր գործիք, չնայած ընտրողների անձնական տվյալների բացահայտման առումով մտահոգություններին:²⁹ Այնուհանդերձ, նման միջոցները չպետք է փոխարինեն ընտրակեղծիքներ կատարողների դեմ արդյունավետ պայքարի այլ միջոցներին:

Բշխանությունները պետք է նախաձեռնողական կերպով միջոցներ ձեռնարկեն ընտրացուցակներում մուտքագրումների չարաշահումները կանխելու ուղղությամբ՝ ժամանակին հետապնդումներ իրականացնելով ընտրակեղծիքի դիմող անձանց նկատմամբ: Պետք է նաև իրականացնել միջոցների վերանայում՝ ընտրողների անհատական տվյալների պաշտպանությունը երաշխավորելու համար, մինչև ժամանակ ապահովելով, որ անհրաժեշտ օրինաչափ դեպքերում ընտրացուցակներում ընդգրկվելու հնարավորությունը պահպանված լինի:

²⁷ Ընտրողները մինչև մարտի 23-ը կարող էին դիմել ուղղումներ անելու, ցուցակներում ընդգրկվելու կամ ցուցակներից հանվելու համար՝ ինչպես իրենց, այնպես էլ այլ ընտրողների փոխարեն. նման դիմումներ եղել են որոշ ընտրողների կողմից: Քվեարկության օրը ընտրողները կարող էին ընդգրկվել ընտրացուցակում միայն ԱՎՎ կամ դատարանի որոշման հիման վրա:

²⁸ Օրինակ, մոտ 2,500 հասցեների դեպքում նույն հասցեում գրանցված էր 15 և ավելի ընտրող:

²⁹ Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի՝ ընտրություններին մասնակցած ընտրողների ցուցակների հրապարակման մասին 2016թ.-ի մեկնաբանական հայտարարության III պարբերությունը շեշտում է, որ «պետք է ճիշտ հավասարակշռություն գտնել տվյալների պաշտպանության և քվեարկության գաղտնիության միջև մի կողմից, և ստորագրված (կամ կնքված) ընտրացուցակները դիտելու՝ շահագրգիռ անձանց հետաքրքրության միջև՝ մյուս կողմից»։ Տե՛ս նաև [Էլեկտրոնային քվեարկության իրավական, գործառնական և տեխնիկական նորմերի մասին ԵՄ Նախարարների կոմիտեի \(2004\)11 հանձնարարականի](#) 86-րդ պարբերությունը:

Ընտրական իրավունքի իրացումը դյուրացնելու նպատակով ընտրողներին հնարավորություն էր տրվել իրենց հաշվառումը ժամանակավորապես փոխել այն բնակավայր, որտեղ նրանք գտնվելու էին քվեարկության օրը:³⁰ Այնուհանդերձ, մի շարք քաղաքական կուսակցություններ և ՀԿ-ներ մտահոգություններ հայտնեցին առ այն, որ որոշ տարածքային թեկնածուներ ճնշումներ էին գործադրել ընտրողների վրա՝ հաշվառման վայրը փոխելու և իրենց առաջադրված ընտրատարածքում վերագրանցվելու համար: ԱՎԿ-ն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրեց, որ ընտրողների՝ որևէ կոնկրետ տարածքում վերահաշվառման կազմակերպված դեպքեր չեն գրանցվել: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից նախնական և վերջնական ընտրացուցակների վերլուծության արդյունքում ևս չհայտնաբերվեցին ընտրողների՝ մի ընտրատարածքից մյուսը զանգվածային վերահաշվառումներ:

Որպես այլ անձի փոխարեն քվեարկելու և ընտրացուցակներում մուտքագրումների չարաշահումների տեսքով ընտրակեղծիքների կանխման լրացուցիչ մեխանիզմ, ընտրությունների օրը ընտրողների ինքնության ստուգումն իրականացվել է ԸԳՄ-երի միջոցով, որոնց մեջ ներբեռնված էին ընտրացուցակների էլեկտրոնային տարբերակները:³¹ Ընտրողների անձը հաստատող փաստաթղթերը սքանավորվել են՝ ստուգելու, թե արդյոք ընտրողը գրանցված է տվյալ տեղամասում, և թե արդյոք տվյալ ընտրողը գրանցվել չէ համակարգի կողմից որպես արդեն քվեարկած անձ: Ընտրողների մատնահետքերը նույնպես սքանավորվել են ընտրությունների օրը՝ ԿԸՀ-ին թույլ տալով ստուգել դրանց համապատասխանությունը ԱՎԿ-ում գրանցված մատնահետքերին:³² ԿԸՀ-ն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրեց, որ մատնահետքերի ստուգումներ չի իրականացրել, քանի որ կրկնակի քվեարկության հնարավոր դեպքերի մասին բողոքներ չեն եղել:

ԸԳՄ-երի ներմուծումը ողջունել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի գրուցակիցների մեծ մասը, որպես ընտրությունների օրվա գործընթացների նկատմամբ վստահության բարձրացման օգտակար գործիք: Սակայն ԸԳՄ-երի առաքման և ծրագրավորման ուշացումը բերեց նրան, որ քիչ ժամանակ մնաց սարքավորումների փորձարկման և օպերատորների ուսուցման համար:³³ Ընտրությունների օրվա մոտենալուն զուգընթաց, մտահոգություններ հնչեցին ԸԳՄ-երի անխափան աշխատանքի և ընտրազանգվածի՝ դրանց օգտագործման մանրամասներին տիրապետելու վերաբերյալ, այնուհանդերձ, քվեարկության օրը ԸԳՄ-երն օգտագործվեցին առանց նշանակալի խնդիրների (տե՛ս՝ *Ընտրությունների օրը*):³⁴ Քաղաքական կուսակցություններին տրամադրվել էր մատչում ԸԳՄ-երի ծրագրաշարի սկզբնական կողերին, սակայն դրանից օգտվելու համար դիմել էր միայն մեկը: ԸԳՄ-երի մանրամասն տեխնիկական

³⁰ Ընդհանուր առմամբ 28,277 ընտրող է ներկայացրել նման դիմումներ, այդ թվում՝ ծառայության մեջ գտնվող ոստիկաններ և իրենց հաշվառման վայրից դուրս աշխատող ՏԸՀ անդամներ:

³¹ Ընտրական գործընթացում նորագույն տեխնոլոգիաների ներմուծումը հավանության է արժանացել ընդդիմության և քաղաքացիական հասարակության կողմից, իսկ մի շարք միջազգային կազմակերպություններ ֆինանսական ու տեխնիկական աջակցություն են տրամադրել:

³² Ըստ ԱՎԿ-ի, ընտրողների 30 տոկոսն ունեցել է կենսաչափական անձնագրեր՝ իրենց մատնահետքերի նշումով:

³³ ԿԸՀ-ն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրեց, որ 2017թ.-ի փետրվարի 12-ի տեղական ընտրությունների ժամանակ ԸԳՄ-երի մասնակի փորձարկումը որոշակի թերություններ էր բացահայտել, բայց որ իրենք քայլեր էին ձեռնարկել դրանց լուծման ուղղությամբ: Մարտի 25-ին ԿԸՀ-ն կազմակերպեց ԸԳՄ-երի վերջնական տարբերակի հանրային ցուցադրում:

³⁴ ԸԳՄ-երի ծրագրաշարի վերջնական տարբերակը տրամադրվել էր ԿԸՀ-ին մարտի 18-ին: Ընտրողներն ընդհանուր առմամբ հնարավորություն չէին ունեցել ծանոթանալու ԸԳՄ-երի հետ նախքան քվեարկության օրը:

հատկորոշումների մասին տեղեկագիր կազմվել էր միայն անգլերեն լեզվով, որը չէր հրապարակվել:³⁵

Ընտրական ընթացակարգերի ցանկացած փոփոխություններ, որոնք առնչվում են նորագույն տեխնոլոգիաներին, պետք է համաձայնեցվեն, օրենսդրորեն կարգավորվեն, փորձարկվեն և հրապարակվեն ընտրություններից բավականաչափ ժամանակ առաջ: Ընտրություններում կիրառվող նորագույն տեխնոլոգիաների թափանցիկության բարձրացման համար ԿԸՀ-ն պետք է մանրամասն տեխնիկական հատկորոշումների փաստաթուղթ հրապարակի և ավելի շատ տեղեկատվություն տրամադրի ընտրողներին դրանց օգտագործման վերաբերյալ:

Համացանցով քվեարկությունը հասանելի է եղել արտերկրում տեղակայված դիվանագիտական և ռազմական ուղորտների ծառայողների, ինչպես նաև արտերկրում աշխատող հայկական իրավաբանական անձանց ներկայացուցիչների ու նրանց ընտանիքների անդամների համար: Ընդհանուր թվով գրանցված են եղել 877 ընտրողներ, որոնցից 747-ը քվեարկել են էլեկտրոնային եղանակով:

VIII. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Ներառական գործընթացի շրջանակներում ԿԸՀ-ն գրանցեց ընտրություններին մասնակցելու համար դիմում ներկայացրած բոլոր հինգ քաղաքական կուսակցությունների և չորս կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները՝ ընդհանուր թվով 1,558 թեկնածու:³⁶ Թեկնածուները պետք է լինեին քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող և այնտեղ մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող անձինք: Ըստ օրենքի, լեզվի իմացությունը կարող է ստուգվել միջնակարգ կամ բարձրագույն ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթով, կամ թեստ հանձնելու միջոցով:³⁷ Ի կատարումն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականներից մեկի, Կրթության և գիտության նախարարության կողմից անցկացվող թեստը հիմնված էր ողջամիտ և օբյեկտիվ չափորոշիչների վրա: Դատավորները, դատախազները, զինծառայողները և այլ հանրային ծառայողները, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների անդամները չէին կարող հանդես գալ որպես թեկնածու:

Չնայած նոր սահմանադրությունը քաղաքացիության և մշտական բնակության պահանջը հինգ տարուց կրճատել է չորսի, իսկ Ընտրական օրենսգիրքն էլ մանրամասն սահմանում է, թե ինչպես պետք է հաշվել բնակության տևողությունը, թեկնածուների նկատմամբ այլ երկրի քաղաքացիության հիմքով կիրառվող սահմանափակումները հակասում են միջազգային

³⁵ ԵՄ Նախարարների կոմիտեի՝ էլեկտրոնային քվեարկության իրավական, գործառնական և տեխնիկական նորմերի մասին (2004)11 հանձնարարականի 21-րդ կետում ասվում է, որ քվեարկության նոր տեխնոլոգիաների աշխատանքի մասին տեղեկատվությունը պետք է մատչելի լինի հանրությանը:

³⁶ Հայկական Վերածնունդ, Հայ շեղափոխական Դաշնակցություն, Հայաստանի Կոմունիստական կուսակցություն, Կոնգրես-Հայաստանի ժողովրդական կուսակցություն դաշինք, Ազատ դեմոկրատներ, Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան դաշինք, Հայաստանի Հանրապետական կուսակցություն, Ծառուկյան և ԵԼՔ դաշինքներ:

³⁷ Թեստի համար դիմած բոլոր 11 թեկնածուները ստացան լեզվին տիրապետելու մասին վկայական:

ստանդարտներին:³⁸ Թեկնածուների ցուցակներ կարող էին ներկայացվել քաղաքական կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից, սակայն, թեև ցուցակները կարող էին ընդգրկել անկուսակցական թեկնածուների, օրենքը վերջիններիս համար չէր նախատեսում անհատական կարգով հանդես գալու հնարավորություն:³⁹

Երկրադաքացիություն ունեցող անձանց առաջադրվելու իրավունքի սահմանափակումները պետք է վերացվեն: Պետք է նաև դիտարկել անհատ թեկնածուների առաջադրման հնարավորություն սահմանելը:

Գրանցվելու համար կուսակցություններն ու դաշինքները ընտրական գրավ են մուծում, որը վերադարձվում է, եթե ցուցակը ստանում է չորսից ավելի տոկոս կողմ քվեարկած քվեաթերթիկներ:⁴⁰ Մասնակցող կուսակցություններից և դաշինքներից յուրաքանչյուրը առաջադրել է մեկ համապետական ցուցակ՝ նվազագույնը 80 թեկնածուներով, և 13 ընտրատարածքներին համապատասխանող տարածքային ցուցակներ:⁴¹ Բացի այդ, համապետական ցուցակը կարող է ունենալ առանձին մաս, որտեղ կարող է ընդգրկվել առավել մեծ թվով մշտական բնակություն ունեցող ազգային փոքրամասնություններին հատկացված չորս տեղերից յուրաքանչյուրի համար մինչև չորս թեկնածու: Ազգային փոքրամասնությունների ցուցակներով թեկնածուներ առաջադրել էին միայն Հայկական Վերածնունդը, ՀՀԿ-ն, Կոնգրես-ՀԺԿ և Ծառուկյան դաշինքները: Կուսակցություններից մի քանիսը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի հետ հանդիպումների ընթացքում նշեցին, որ դժվարացել են փոքրամասնությունների այնպիսի թեկնածուներ գտնել, որոնք հավատարիմ չէին լինի իշխող կուսակցությանը: Բացի այդ, ազգային փոքրամասնությունների ՀԿ-ները ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի հետ հանդիպումների ընթացքում նշեցին, որ առաջադրված թեկնածուներին իրենք ավելի շուտ ընկալում էին որպես տվյալ քաղաքական կուսակցության, քան փոքրամասնության համայնքի ներկայացուցիչ:

Բոլոր մասնակից կուսակցություններն ու դաշինքները պահպանել են Ընտրական օրենսգրքի պահանջը, ըստ որի յուրաքանչյուր սեռ պետք է ներկայացված լինի համապետական ցուցակի թեկնածուների առնվազն 25 տոկոսի չափով, և ցանկացած ամբողջ թվով քառյակում պետք է ներկայացված լինի սեռերից յուրաքանչյուրը: Որպես ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ նախկին հանձնարարականների դրական արդյունք, գենդերային քվոտան կիրառվել է նաև ստացած և թափուր մանդատների բաշխման ժամանակ: Սակայն, թեև կանայք կազմում էին թեկնածուների 30 տոկոսը, նրանցից միայն 18-ն են ընտրվել (17-ը համապետական ցուցակներից և 1-ը՝ տարածքային ցուցակից), որի արդյունքում նոր խորհրդարանում կին պատգամավորները կազմել են 17 տոկոս: Դա հակասում է Հայաստանի ստանձնած՝ կին թեկնածուների համար *փաստացի* հավասար հնարավորություններ ապահովելու միջազգային պարտավորությունը:⁴²

³⁸ *Տանասեն ընդդեմ Մոլդովայի (Tănase v. Moldova)* (դիմում 7/08, 27, 2010թ.-ի ապրիլ) գործում ՄԻԵԴ-ը գտավ, որ «այնտեղ, որտեղ բազմակի քաղաքացիությունը թույլատրված է, մեկից ավելի քաղաքացիություն ունենալը չպետք է ԱԺ պատգամավոր դառնալու արգելքի հիմք լինի »:

³⁹ ԵԱՀԿ-ի՝ 1990թ.-ի Կոպենհագենի փաստաթղթի 7.5 պարբերությունն անդամ պետություններին պարտավորեցնում է «առանց խտրականության հարգել քաղաքացիների՝ քաղաքական կամ պետական պաշտոններ զբաղեցնելու իրավունքը, լինի դա որպես անհատ, թե քաղաքական կուսակցության կամ կազմակերպության ներկայացուցիչ»: Ըստ ԿԸՀ-ի, թեկնածուների 15 տոկոսը առաջադրող կուսակցության անդամ չէր:

⁴⁰ Գրավը 10 մլն. ՀՀ դրամ է (մոտ 19,450 եվրո): 1 եվրոն մոտավորապես հավասար է 514 ՀՀ դրամի:

⁴¹ Յուրաքանչյուր 15.000 քաղաքացու հաշվարկով առավելագույնը 1 թեկնածու կարող է ընդգրկվել տարածքային ընտրական ցուցակում: Տարածքային թեկնածուները պետք է նաև ներառվեն համապետական ցուցակում: Տարածքային թեկնածուների առավելագույն թիվը եղել է 7-ից 15:

⁴² Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 4.1 հոդվածը նշում է, որ «կանաց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության արագացմանն ուղղված

Պետք է դիտարկել կին թեկնածուների առաջնությանն ուղղված հատուկ միջոցները խթանելու հնարավորությունը: Դա կարող է իրականացվել թերևեկայացված սեռի թեկնածուներին համապետական ցուցակի առնվազն յուրաքանչյուր երկրորդ դիրքում ընդգրկելու, տարածքային ընտրական ցուցակներում կին թեկնածուների նվազագույն թիվ սահմանելու, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների նկատմամբ՝ իրենց կին թեկնածուների թիվն ավելացնելուն ուղղված խրախուսական միջոցներ կիրառելու միջոցով:

IX. ՔԱՐՈՉԱՐՇԱՎ

Պաշտոնական քարոզարշավն սկսվել է մարտի 5-ին և ավարտվել ընտրությունների օրվանից 24 ժամ առաջ: Հիմնարար ազատությունները լայնորեն պահպանված են եղել, և ընտրություններին մասնակցող կուսակցություններն ու դաշինքները կարողացել են քարոզարշավ իրականացնել առանց սահմանափակումների, թեև եղել են երկրի որոշ շրջաններում բռնության առանձին դեպքերի մասին հաղորդումներ:⁴³ Սկզբնական շրջանում պասիվ լինելով՝ քարոզարշավն ակտիվացավ ընտրությունների օրվա մոտենալուն զուգընթաց:⁴⁴ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ գրուցակիցներից շատերի խոսքերով, քարոզարշավն ընթացել է ընտրողների՝ քաղաքականության և ընտրությունների նկատմամբ ընհանուր հիասթափության միջավայրում:

Մասնակից կուսակցություններին ու դաշինքներին հասանելի ռեսուրսները ազդել են յուրաքանչյուրի քարոզարշավի վրա, որը հիմնականում իրականացվել է հավաքների, դռնեղուտ քարոզչության, պաստառների, ԶԼՄ գովազդային հոլովակների և էլեկտրոնային լրատվամիջոցների ու սոցիալական մեդիայի միջոցով: Քարոզչական ծրագրերը կենտրոնացած էին սոցիալական հարցերի, աշխատատեղերի ստեղծման, ենթակառուցվածքների և տնտեսական ներդրումների, ինչպես նաև ազգային անվտանգության խնդիրների վրա: Այնուհանդերձ, գործնականում քարոզարշավը շատ դեպքերում առավել կենտրոնացած էր անհատ թեկնածուների, քան քաղաքական ծրագրերի կամ քաղաքականության վրա: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ գրուցակիցներից շատերը մտահոգություններ հնչեցրին քաղաքական կուսակցությունների միջև իրական քաղաքական բանավեճի, ինչպես նաև ընտրողների ու թեկնածուների միջև՝ վերջիններիս քաղաքական ծրագրերի վերաբերյալ երկխոսության պակասի վերաբերյալ: ՀԿ-ների և մարզային լրատվամիջոցների մի շարք նախաձեռնություններ հնարավորություն ստեղծեցին թեկնածուներին ներգրավել որոշակի սահմանափակ բանավեճի մեջ, սակայն դա բավարար տեղեկություններ չտվեց ընտրողներին, մասնակիցների քաղաքական ծրագրերի վրա հիմնված և տեղեկացված ընտրություն կատարելու համար:

Ընտրական օրենսգիրքն ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար հավասար հնարավորություններ է սահմանում պաշտոնական քարոզարշավի

Ժամանակավոր հատուկ միջոցառումները չեն կարող դիտվել որպես խտրականություն»: Տե՛ս՝ նշված Կոնվենցիայի 2004թ.-ի Կոմիտեի թիվ 25 Ընդհանուր հանձնարարականի 7-9 պարբերությունները: Տե՛ս նաև ԵԱՀԿ Նախարարների խորհրդի 7/09 որոշման 3-րդ պարբերությունը, որն անդամ պետություններին կոչ է անում «քաջալերել քաղաքական ոլորտի բոլոր գործող անձանց՝ խթանել քաղաքական կուսակցություններում տղամարդկանց և կանանց հավասար մասնակցությունը վճռորոշ պետական պաշտոնների բոլոր մակարդակներում ավելի հավասարակշռված գենդերային ներկայացվածության հասնելու համար»:

⁴³ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ը հաղորդումներ է ստացել Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերից:

⁴⁴ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն ողջ երկրի տարածքում դիտարկել է 99 հավաք:

Ժամակահատվածի ընթացքում, այդ թվում՝ հանրային ռեսուրսներից օգտվելու հավասարություն, անվճար և վճարովի եթերաժամ, տարածքներ՝ պաստառներ փակցնելու և ընտրողների հետ հանդիպումներ կազմակերպելու համար: Արգելվում է նախընտրական շտաբեր տեղակայել պետական և ՏԻՄ մարմինների կողմից օգտագործվող շենքերում, ինչպես նաև քարոզարշավային պաստառներ փակցնել պետական շենքերի վրա:⁴⁵ Վարչական ռեսուրսի չարաշահումը կանխելու համար, պետական պաշտոնյաներին արգելվում է քարոզչություն իրականացնել իրենց պաշտոնական լիազորությունները կատարելիս: Դրական էր այն, որ շատ մարզային պաշտոնյաներ արձակուրդ էին վերցրել քարոզարշավի ընթացքում, մինչ կառավարության պաշտոնյաները, այդ թվում՝ վարչապետը, քարոզչություն իրականացնում էին հիմնականում հանգստյան օրերին:⁴⁶

Ողջ երկրի տարածքում եղան որոշ կուսակցությունների օգտին ընտրակաշառք բաժանելու դեպքերի մասին համատարած պնդումներ, և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն բազմաթիվ արժանահավատ հաղորդումներ ստացավ անմիջապես ընտրողներից:⁴⁷ Այդպիսի պնդումները շարունակվեցին նաև ընտրությունների օրը, երբ լրատվամիջոցները հաղորդեցին և ԸՄԴԱ-ն էլ ականատես եղավ, թե ինչպես են քվեարկելուց առաջ ընտրողները մեծաթիվ խմբերով այցելում կուսակցությունների նախընտրական շտաբեր:⁴⁸ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի շատ զրուցակիցներ, այդ թվում՝ որոշ պետական պաշտոնյաներ նշեցին, որ ընտրակաշառքը դարձել է քաղաքական մշակույթի անբաժանելի մաս՝ բացատրելով, որ ձայնի դիմաց դրամ կամ այլ օգուտներ ընդունելը հաճախ պատճառաբանվում է ծայրահեղ աղքատությամբ և տնտեսական հնարավորությունների պակասով:⁴⁹

Քարոզարշավի ողջ ընթացքում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արժանահավատ հաղորդումներ ստացավ ընտրողների, հատկապես պետական և մասնավոր հատվածի աշխատողների նկատմամբ ճնշումների ու ահաբեկման դեպքերի մասին:⁵⁰ Ընտրություններից ոչ շատ առաջ

⁴⁵ Օրենքը դեռ թույլատրում է նախընտրական շտաբերի տեղակայումը պետական և ՏԻ մարմիններին պատկանող, բայց նրանց կողմից չօգտագործվող շենքերում:

⁴⁶ Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզպետները, Ագարակի (Մեղրի) և Հրազդանի քաղաքապետները և Կոտայքի մարզպետի երեք տեղակալներ արձակուրդ էին վերցրել լիարժեք քարոզարշավ իրականացնելու նպատակով:

⁴⁷ Օրինակ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արժանահավատ հաղորդումներ էր ստացել, որ Սյունիքի մարզպետը բռնուսներ է խոստացել ՁՊՄԿ հանքարդյունաբերական ընկերության աշխատակիցներին ՀՀԿ-ի օգտին քվեարկելու համար, որ ՀՀԿ-ն դրամ է առաջարկել դասատուներին Կոտայքի և Սյունիքի մարզերում, և որ Ծառուկյանը դրամ է առաջարկել ընտրողներին Սյունիքում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն բազմաթիվ հաղորդումներ է ստացել անմիջապես մարզերում գտնվող մարդկանցից, որ նրանք վճար էին ակնկալում իրենց ձայնի դիմաց:

⁴⁸ Օրինակ, ԸՄԴԱ-ն ընտրությունների օրը ականատես է եղել ՀՀԿ շտաբերի առջև ընտրողների երկար հերթերի Լոռիում և Երևանում:

⁴⁹ Ընտրակաշառքի ինստիտուտի նկատմամբ թողովությունը հակասում է ԵԱՀԿ Ստամբուլի փաստաթղթի 33-րդ պարբերությանը, ըստ որի «անդամ պետությունները պարտավորվում են կրկնապատկել կոռուպցիայի և դրան նպաստող պայմանների դեմ պայքարին ուղղված ջանքերը և խթանել լավ կառավարման պրակտիկայի ու հանրային արդարության համար դրական միջավայրի ստեղծումը»:

⁵⁰ Օրինակ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին մի շարք պետական մարմինների աշխատակիցներ տեղեկացրել էին, որ մարտի 15-ին Սյունիքի մարզպետը նրանց ցուցում էր տվել քվեարկել ՀՀԿ-ի օգտին: Սյունիքի մշակույթային կենտրոնի ղեկավարն իր աշխատակիցներից պահանջել էր ՀՀԿ աշակիցների ցուցակներ կազմել: Սյունիքում դասատուներին սպառնացել էին աշխատանքից ազատել, եթե չքվեարկեին ՀՀԿ-ի օգտին: Դասատուները, բժիշկները և այլ հանրային աշխատողներ իրենց վերադասների կողմից ցուցումներ էին ստացել գնալ Արմավիրում ՀՀԿ

«Իրագել քաղաքացիների միավորում» ՀԿ-ն ձայնագրությունների միջոցով ստացավ տեղեկություն, որ 114 դպրոցների տնօրեններ դասատուների և աշակերտների ծնողների անունների ցուցակներ էին հավաքել ի աջակցություն ՀՀԿ-ի: Որոշ դեպքերում այդ ցուցակները հանձնվել էին տեղական իշխանություններին: Երկու քաղաքական կուսակցություններ բողոք ներկայացրին ԿՐՀ-ին առ այն, որ դպրոցի տնօրենների այդ արարքը հանդիսանում է վարչական ռեսուրսի չարաշահում:⁵¹ Բացի այդ, թեև ընտրողներն ընդհանուր առմամբ ազատ էին բոլոր մասնակից կուսակցությունների ու դաշինքների մասին տեղեկատվություն ստանալու հարցում, որոշ ընդդիմադիր կուսակցություններ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին հայտնեցին, որ իրենց աջակիցների վրա ճնշումներ էին գործադրվել իրենց հավաքներին չհաճախելու համար:⁵²

Ընտրակաշառքի, ընտրողների նկատմամբ ճնշումների և ահաբեկումների մասին լայնատարած հաղորդումները, միասին վերցված, բացասաբար անդրադարձան քարոզարշավի վրա՝ նպաստելով ընտրական գործընթացի նկատմամբ հանրային ցածր վստահության խորացմանը: Դա, քվեարկության գաղտնիության պահպանման վերաբերյալ ընտրությունների օրը և դրանից հետո հնչած զգալի մտահոգությունների հետ միասին (տե՛ս՝ *Հետընտրական զարգացումներ*), կասկածներ հարուցեցին առ այն, թե արդյոք ընտրողները կարողացել են իրենց կամքն արտահայտել ազատ և առանց հաշվեհարդարից վախենալու, ինչպես պահանջում է 1990թ.-ի ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթի 7.7-րդ պարբերությունը:⁵³

Իշխանություններն ու քաղաքական կուսակցությունները պետք է առավելագույն միջոցներ ձեռնարկեն ընտրությունների արդարության նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու ուղղությամբ, այդ թվում՝ խրախուսելով հանրությանը, որ խուսափեն ձայների առքուվաճառքից, և ապահովելով, որ քաղաքացիների նկատմամբ ճնշումներ չգործադրվեն քարոզարշավի միջոցառումներին հաճախելու և այս կամ այն կերպ քվեարկելու համար:

Ընդհանուր առմամբ, կին թեկնածուները քարոզարշավի ընթացքում աջակցություն են ստացել իրենց կուսակցություններից և ակտիվորեն ներգրավված են եղել քարոզչության մեջ:⁵⁴ Այնուհանդերձ, նախընտրական շտաբերում նրանց վճռորոշ պաշտոններ չեն տրվել, և նրանք

թեկնածուի հետ հանդիպմանը: Երևանում մի մասնավոր ընկերության սեփականատեր իր աշխատակիցներին սպառնացել էր աշխատանքից ազատել, եթե իրեն անհրաժեշտ թվով ՀՀԿ աջակիցների ցուցակներ չներկայացնեին:

⁵¹ ՀՀԿ-ն [ընդունեց, որ անունների ցուցակագրում տեղի ունեցել է՝](#) պնդելով սակայն, որ դա օրինաչափ քարոզչություն է, քանի որ չի կատարվել աշխատանքային ժամերին: Տե՛ս՝ *Դիմումներ և բողոքներ*:

⁵² Կոնգրես-ՀԺԿ-ի, ՕԼՕ-ի և ԵԼՔ-ի ներկայացուցիչները ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին հայտնեցին, որ իրենց աջակիցներին խանգարել են այցելել իրենց հավաքներին, հաճախ համայնքի ղեկավարների կողմից ճնշումների միջոցով:

⁵³ ԵԱՀԿ Կոպենհագենի 1990թ.-ի փաստաթղթի 7.7 պարբերությունը անդամ պետություններին պարտավորեցնում է «ապահովել, որ օրենքն ու պետական քաղաքականությունը թույլատրեն քաղաքական քարոզչության իրականացումը ազատ և արդար միջավայրում, որտեղ ո՛չ վարչական գործողությունները, ո՛չ բռնությունը, և ո՛չ էլ ահաբեկումները չեն խանգարի կուսակցություններին ... ազատ արտահայտել իրենց տեսակետները ... կամ ընտրողներին՝ տեղեկանալ դրանց մասին, կամ քննարկել դրանք, կամ իրականացնել իրենց կամարտահայտությունը ազատ և առանց հաշվեհարդարի վախի»: Տե՛ս նաև 2016թ.-ի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի՝ «Ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահման կանխարգելման և դրան արձագանքելու Համատեղ ուղենիշերը»:

⁵⁴ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկված քարոզչական հավաքների այցելուների մոտ 30 տոկոսը կանայք էին:

հազվադեպ են քարոզչական միջոցառումների ընթացքում եղել հիմնական խոսնակներ:⁵⁵ Կուսակցությունների ընտրական ծրագրերը ուղղակիորեն չեն անդրադարձել հանրային կյանքում կանանց մասնակցության խնդրին: Բացի այդ, կին թեկնածուներն իրենք էլ քարոզչության ընթացքում լռել են գենդերային հարցերի մասին՝ նախապատվությունը տալով առավել լայն սոցիալական խնդիրների քննարկմանը:

X. ՔԱՐՈՁԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Ի կատարումն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականների, քարոզարշավի ֆինանսավորման հաշվետվությունների և վերահսկողության հետ կապված որոշ իրավական դրույթներ խստացվել են, այդ թվում՝ երաշխավորվել է ԿՀՀ Վերահսկիչ-Վերստուգիչ ծառայության անկախ կարգավիճակը, ինչպես նաև մասնակից կուսակցությունների համար սահմանվել է քարոզարշավի ֆինանսավորման մասին պարբերական և մանրամասն հայտարարագրեր ներկայացնելու պահանջ:⁵⁶ Այնուհանդերձ, մի շարք նշանակալի թերություններ և այն, որ ՎՎԾ-ն քարոզարշավի ֆինանսավորման մշտադիտարկում իրականացնելիս պրոակտիվ մոտեցում չի կիրառել, նվազեցրել են քարոզարշավի ֆինանսավորման համակարգի թափանցիկությունն ու արդարությունը:⁵⁷

Օրենքը քարոզարշավի ծախսերի առավելագույն շեմ է սահմանում յուրաքանչյուր մասնակցի համար մինչև 500 մլն. ՀՀ դրամ առաջին փուլի, և մինչև լրացուցիչ 200 մլն. ՀՀ դրամ՝ երկրորդ փուլի համար:⁵⁸ Նախընտրական հիմնադրամը կարող է ներառել ընտրողների կողմից արվող դրամական մուծումներ և այլ նյութական ակտիվների նվիրատվություններ, ինչպես նաև թեկնածուների և կուսակցությունների անձնական միջոցներ:⁵⁹ Իրավաբանական անձանց, ինչպես նաև արտերկրում գտնվող և անանուն աբյուրների կողմից մուծումներ չեն թույլատրվում: Հակառակ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականի, այսպես կոչված կազմակերպչական ծախսերը, ինչպես օրինակ, նախընտրական շտաբերի, տրանսպորտի և հաղորդակցման ծախսերը, ներառված չեն քարոզարշավի ֆինանսավորման հայտարարագրերում, ինչը սահմանափակում է քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկությունը:

Իրավական դաշտը պետք է հաշվետվության պահանջ սահմանի բոլոր քարոզարշավային ծախսերի, այդ թվում՝ նախընտրական շտաբերի, տրանսպորտի և հաղորդակցության կազմակերպչական ծախսերի համար:

⁵⁵ Համաձայն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի ՁԼՄ մշտադիտարկման արդյունքների, ամենադիտվող եթերաժամի լրատվական թողարկումների շրջանակներում քարոզարշավի լուսաբանման միայն ինը տոկոսն էր նվիրված կին քաղաքական գործիչներին:

⁵⁶ Տե՛ս նաև [2014թ.-ի ԳՐԵԿՈ-ի Երկրորդ համապատասխանության զեկույցը Հայաստանում կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության մասին:](#)

⁵⁷ 2003թ.-ի ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ Կոնվենցիայի 7.3 հոդվածը սահմանում է, որ պետությունները պետք է «պաշտոնաճ օրենսդրական և վարչական միջոցներ ձեռնարկեն ... ընտրովի պետական պաշտոնների թեկնածուների և, անհրաժեշտության դեպքում, քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը բարձրացնելու ուղղությամբ»:

⁵⁸ ԿՀՀ-ն կարող է տուգանել քարոզարշավի ֆինանսավորման կանոնները խախտող մասնակիցներին, կամ դիմել դատարան որևէ ընտրական ցուցակի գրանցումը անվավեր ճանաչելու համար, եթե քարոզարշավի ծախսերը 20 տոկոսով գերազանցել են սահմանված շեմը:

⁵⁹ Համապատասխանաբար 500,000 ՀՀ դրամ, 5 մլն. ՀՀ դրամ և 100 մլն. ՀՀ դրամ:

Ըստ Ընտրական օրենսգրքի՝ ՎՎԾ-ն պետք է գործի ԿԸՀ-ից անկախ, սակայն օրենքը հստակ չի սահմանում նրա ինստիտուցիոնալ կարգավիճակը կամ աշխատակարգը: ՎՎԾ-ին ունի ԿԸՀ-ից իրական անկախության պակաս, քանի որ վերջինս է նշանակում ու պաշտոնից ազատում ՎՎԾ-ի ղեկավարին: Բացի այդ, ՎՎԾ-ն չի կարող իր նախաձեռնությամբ որևէ վարչական վարույթ սկսել կամ վիճարկել ԿԸՀ որոշումները: Խորհրդարանական կուսակցությունների կողմից վեց աուդիտորներ էին նշանակվել ՎՎԾ-ի հետ աշխատելու համար, սակայն նրանց գործողությունները բավարար կերպով կանոնակարգված չէին, ոչ էլ իրականացվել են միատեսակ և հետևողական կերպով:⁶⁰

Ինչպես պահանջվում է օրենքով, բոլոր մասնակից կուսակցություններն ու դաշինքները հատուկ հաշվեհամարներ են բացել իրենց քարոզարշավի ֆինանսական գործարքների համար և ներկայացրել երեք ֆինանսական հայտարարագիր մուծումների ու ծախսերի վերաբերյալ:⁶¹ ՎՎԾ-ն քարոզարշավի ֆինանսավորման խախտումներ չի հայտնաբերել և ԿԸՀ վեբ կայքում հրապարակել է տեղեկատվություն մասնակից կուսակցությունների ու դաշինքների ամբողջական եկամուտների ու ծախսերի մասին:⁶² Յուրաքանչյուր երեք աշխատանքային օրը մեկ Կենտրոնական բանկը ՎՎԾ-ին տրամադրել է նվիրատուների ցանկ, սակայն այդ տեղեկատվությունը չի ներկայացվել հանրությանը:⁶³ Ընդհանուր առմամբ ՎՎԾ-ն պրոակտիվ կերպով չի ուսումնասիրել հաշվետվությունների ճշգրտությունը:

Քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության թափանցիկությունն ու արդյունավետությունը բարձրացնելու համար Վերահսկիչ-Վերստուգիչ ծառայությունը պետք է ունենա համապատասխան ռեսուրսներ, տեխնիկական փորձագիտական ուժ և անկախություն:

⁶⁰ Մինչ Ընտրական օրենսգրքը լիազորում է ՎՎԾ-ին ամփոփել բանկային քաղվածքները, ՎՎԾ կանոնակարգը պահանջում է իրականացնել այդ քաղվածքների աուդիտ: ԿԸՀ-ի՝ քարոզարշավի եկամուտների ու ծախսերի աուդիտի Ընթացակարգը ՎՎԾ-ին լիազորում է կատարել ծախսերի խաչաձև ստուգումներ, սակայն դա չի արվել: Մինչ որոշ աուդիտորներ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրին, որ ուսումնասիրել են բոլոր ներկայացված հայտարարագրերը, այլոք ընտրողաբար նայել են որոշ հայտարարագրեր իրենց նշանակող կուսակցության պահանջով: ՎՎԾ-ն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին հայտնեց, որ չի օգտագործել իր՝ ապրանքներ ու ծառայություններ տրամադրած ընկերություններից տեղեկատվություն պահանջելու իրավունքը գործարքների խաչաձև ստուգում իրականացնելու համար:

⁶¹ Թեև ԿԸՀ-ն սահմանել է ձևաթղթեր, հայտարարագրերը մասնակիցների կողմից միատեսակ ձևով չեն լրացվել:

⁶² Իրենց հայտարարագրերի համաձայն, ՀՀԿ-ն մոտ 387 մլն. ՀՀ դրամ է ծախսել քարոզչության համար, Ծառուկյան դաշինքը՝ մոտ 156 մլն. ՀՀ դրամ, ՕԲՕ-ն՝ մոտ 84 մլն. ՀՀԴ, ՀԱԿ-ը՝ մոտ 75 մլն., իսկ մյուս կուսակցությունները միասին վերցված ծախսել են մոտ 164 մլն. ՀՀԴ:

⁶³ 2002թ.-ի ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին ԱՊՀ Կոնվենցիայի 12.5-րդ հոդվածը նշում է, որ «քաղաքական կուսակցությունները պետք է տեղեկություններ տրամադրեն իրենց նվիրատուների և քարոզարշավի միջոցների օգտագործման վերաբերյալ, իսկ ընտրական մարմինները պետք է հրապարակեն այդ տեղեկատվությունը»: Տե՛ս նաև 2010թ.-ի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի՝ Քաղաքական կուսակցությունների կանոնակարգերի Ուղեցույցի 206-րդ պարբերությունը:

XI. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ա. ԶԼՄ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Հայաստանում գործում են բազմաթիվ լրատվամիջոցներ, այդ թվում՝ համապետական հեռարձակմամբ ութ հեռուստաընկերություն: Այնուհանդերձ, ԶԼՄ ոլորտը բնութագրվում է սահմանափակ գովազդային շուկայով, ինչը տեղ է թողնում միայն մի քանի ինքնաբավ լրատվամիջոցների համար: Մասնավոր հեռուստաընկերությունները ենթադրաբար ֆինանսավորվում են գործարարների կողմից՝ ծառայելով նրանց քաղաքական և առևտրային շահերին, իսկ ամենամեծ լսարան ունեցողները հիմնականում ընկալվում են որպես կառավարության հետ փոխկապակցված: Որոշ ՀԿ-ներ մտահոգություններ հայտնեցին առ այն, որ լրատվամիջոցների և գովազդի շուկայում գերիշխում են մի քանի ընկերություններ, որոնք, ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ ԸԴԱ բազմաթիվ զրուցակիցների պնդմամբ, փոխկապակցված են իշխող կուսակցության հետ:

Խոսքի ազատությունը, որը երաշխավորվում է սահմանադրությամբ և օրենքներով, կիրառվել է լայնորեն: Զրպարտությունը ապաքրեականացվել է 2010թ.-ին, որի փոխարեն Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է մինչև 2 մլն. ՀՀ դրամի չափով վնասների փոխհատուցում: Հարդյունս 2011թ.-ի Սահմանադրական դատարանի որոշումներից մեկի, որը խրախուսում էր ոչ դրամական միջոցների կիրառումը՝ ինչպես օրինակ, հրապարակային ներողությունը և հերքումը, զրպարտության հետ կապված քաղաքացիական հայցերի թիվը նվազել է: Թեև գործում է «Տեղեկատվության ազատության մասին» օրենք, որոշ ԶԼՄ ներկայացուցիչներ տեղեկացրին, որ իշխանությունների արձագանքը տեղեկատվության տրամադրման դիմումներին բավարար չէ: Այնուհանդերձ, դատարանները հանրային տեղեկատվության տրամադրման հետ կապված ավելի ու ավելի մեծ թվով քաղաքացիական հայցերով վճիռ են կայացրել հոգուտ հայցվորի:

Չնայած ՀՀ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը մեկ իրավաբանական անձին թույլատրում է ունենալ միայն մեկ հեռուստա և մեկ ռադիո կայանի հեռարձակման արտոնագիր, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը հաստատել է Պանարմենիան Մեդիա Գրուպի կողմից մի քանի հեռուստա և ռադիոընկերությունների, ինչպես նաև էլեկտրոնային լրատվամիջոցների կառավարումը:⁶⁴ Օրենքը նաև չի պահանջում բացահայտել լրատվամիջոցի վերջնական սեփականատիրոջը:⁶⁵ Բացի այդ, հեռարձակման թվայնացումը չի նպաստել հեռուստատեսային բամակարծության մեծացմանը, և որոշ մարզային հեռուստակայաններ մտահոգություն հայտնեցին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ թվային արտոնագիր չեն ստացել:⁶⁶

Պետք է միջոցներ ձեռնարկել լրատվամիջոցների սեփականատիրության լիարժեք թափանցիկությունն ապահովելու համար, օրինակ, լրատվամիջոցների վերջնական

⁶⁴ Պանարմենիան Մեդիա Գրուպի ներքո գործող յուրաքանչյուր լրատվամիջոց տեխնիկապես ունի տարբեր սեփականատեր:

⁶⁵ Համապետական հեռարձակում իրականացնող հեռուստակայանների մեծ մասը գրանցված է որպես ՓԲԸ, և ուստի նրանց սեփականատերերը նշված չեն պետական ռեգիստրում:

⁶⁶ Մրցույթի արդյունքում միայն մեկ արտոնագիր է տրամադրվել յուրաքանչյուր մարզին՝ այդպիսով հեռարձակողների թիվը 44 անալոգայինից կրճատելով 18 թվայինի: Դրական է, որ մարզերի անալոգային հեռուստակայանների արտոնագրերը երկարացվել են մինչև 2020թ., և ներկայումս մարզերում հեռարձակվում են և՛ անալոգային, և՛ թվային հեռուստաալիքներ:

սեփականատերերի ինքնությունը հրապարակելու հստակ պահանջ սահմանելու միջոցով: Լրատվամիջոցների սեփականատերերի և ֆինանսավորման աղբյուրների մասին տեղեկատվությունը պետք է մատչելի լինի հանրությանը:

Լրագրողները ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրին, որ լրատվամիջոցների սեփականատերերի անհարկի միջամտությունն իրենց խմբագրական անկախությանը հանգեցրել է ինքնագրաքննության կիրառման և կառավարության մասին քննադատական լուսաբանումներից խուսափելուն, այդ թվում՝ Հանրային հեռուստաընկերությամբ: Ընտրություններին առնչվող հանրային հետաքրքրություն ներկայացնող պատմություններին, ինչպիսիք են, օրինակ, դպրոցների տնօրենների կողմից աջակիցների ցուցակների հավաքագրումը և ԿՀՀ կողմից ընտրական բողոքների լուսմները, անդրադարձ չի արվել հանրային հեռարձակող Հ1-ի ամենադիտվող եթերաժամի լրատվական թողարկումներում, բայց արվել է այլ լրատվամիջոցների կողմից: Լրագրողները նաև տեղեկացրին, որ լրագրողների դեմ բռնության որոշ վերջին դեպքեր և դրանց անբավարար հետապնդումը օրենքի կողմից խաթարում են իրենց անվտանգությունը և խոչընդոտում աշխատանքին:⁶⁷ Դրական է այն, որ համացանցային ազատության նկատմամբ միջամտություն առկա չէ, և էլեկտրոնային լրատվամիջոցները նպաստում են բազմակարծության մեծացմանն ու կառավարության մասին քննադատական լուսաբանումներին: Բացի այդ, միջազգային նվիրատուների կողմից ֆինանսավորվող որոշ էլեկտրոնային լրատվամիջոցներ հարթակ են տրամադրում խորքային և հետաքննող լրագրության համար:⁶⁸

Բ. ՔԱՐՈՋԱՐԵՍԱՎ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ հեռուստատեսությունն ու ռադիոն պետք է թեկնածուների քարոզարշավի վերաբերյալ ներկայացնեն «անկողմնակալ և գնահատականներից զերծ» տեղեկատվություն: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ)՝ քարոզարշավի ընթացքում լրատվամիջոցներին առնչվող դրույթների կատարումը վերահսկող մարմինը, որևէ տեղեկատվություն չի հրապարակել այն մասին, թե տվյալ դրույթի մշտադիտարկումն ինչպես պիտի իրականացվի: Շատ հեռուստալրագրողներ այդ դրույթը մեկնաբանել են որպես յուրաքանչյուր հաղորդման շրջանակներում յուրաքանչյուր մասնակցի համար հավասար տևողությամբ լուսաբանում իրականացնելու պարտավորություն, և գանգատվել են, որ դա սահմանափակում է քարոզարշավի ըստ էության լուսաբանումը:

Հիմնվելով լրագրողների և մեդիա ՀԿ-ների հետ խորհրդակցությունների վրա՝ ՀՌԱՀ-ը պետք է անկողմնակալության և հավասար լուսաբանման պահանջների կատարման հստակ ուղենիշեր սահմանի:

Մարտի 15-ին և 25-ին ՀՌԱՀ-ը հրապարակել է իր մշտադիտարկման արդյունքները: Թեև ՀՌԱՀ-ը զեկույցել էր ընտրություններին մասնակցող կուսակցությունների լուսաբանման անհավասար եթերաժամանակի մասին, նրա կողմից խախտումներ չէին հայտնաբերվել: ՀՌԱՀ-ը չի մշտադիտարկել լուսաբանման տոնայնությունը:

Քարոզարշավի ընթացքում հանրային Հ1 ընկերությունը հեռարձակեց յուրաքանչյուր մասնակցի համար ընդհանուր տևողությամբ 60 րոպե անվճար հեռուստաեթեր, ինչպես պահանջվում է

⁶⁷ Լրատվամիջոցների ազատության հարցով ԵԱՀԿ ներկայացուցիչը կոչ է արել [պաշտպանել լրագրողների իրավունքները](#) և լրագրողներին առնչվող [դեպքերի մանրագնին հետաքննություն իրականացնել](#):
⁶⁸ Օրինակ, [Civilnet.am](#), [Hetq.am](#) և [Ազատություն ռադիո](#):

օրենքով: Բացի այդ, բոլոր մասնակիցները մշտադիտարկվող հեռուստաընկերություններում հավասար պայմաններով ձեռք բերեցին քաղաքական գովազդի վճարովի եթերաժամանակ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի մշտադիտարկման արդյունքներով պարզվեց, որ քարոզարշավի ընթացքում հանրային Հ1 հեռուստաընկերությունն իր բոլոր լրատվական թողարկումներում հավասար եթերաժամանակ է տրամադրել բոլոր մասնակիցներին:⁶⁹ *Արմենիա հեռուստաընկերությունը* ՀՀԿ-ին և Կոնգրես-ՀԺԿ-ին տրամադրել է մյուս մասնակիցներից յուրաքանչյուրին նվիրված եթերաժամանակի գրեթե կրկնակին (համապատասխանաբար՝ 21 և 19 տոկոս): *Կենտրոն հեռուստաընկերությունը* նշանակալիորեն ավելի երկար լուսաբանման է արժանացրել Ծառուկյան դաշինքին (18 տոկոս), քան մյուս մասնակիցներին: *Շանթ հեռուստաընկերությունը* լրատվականի 20 տոկոսը նվիրել է ՀՀԿ-ին՝ մյուսներին տրամադրած 7-ից 12 տոկոսի դիմաց: *Երկիր Մեդիան* առավելություն է տվել ՀՅԴ-ին իր լրատվական թողարկումների 25 տոկոսով՝ մյուս մասնակիցներին թողնելով 6-ից 13 տոկոս ժամանակ:

Մշտադիտարկվող բոլոր հեռուստաընկերությունների լրատվական լուսաբանումը 98 տոկոսով չեզոք էր և դրական տոնայնությամբ: Այնուհանդերձ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից փետրվարի 24-ից մինչև մարտի 4-ը, այսինքն՝ նախքան քարոզարշավի մեկնարկը ընկած ժամանակահատվածի ընթացքում իրականացված ՁԼՄ մշտադիտարկման արդյունքները պարզեցին, որ մշտադիտարկվող հեռուստաընկերությունների մոտ առկա էր հստակ կանխակալություն հոգուտ հանրության կողմից ընկալվող իրենց կուսակցական պատկանելության: Մշտադիտարկվող էլեկտրոնային լրատվական աղբյուրները հիմնականում ավելի բազմազան և քննադատական լուսաբանում են իրականացրել ընտրական քարոզարշավից առաջ և հետո:

Տարվա ընթացքում, ներառյալ քարոզարշավի ժամանակահատվածում, լրատվության, ինչպես նաև հանրային հեռարձակողի ընթացիկ հաղորդումների և բանավեճերի որակական և քանակական մշտադիտարկում իրականացնելը կարող է նպաստել վերջինիս կողմից քաղաքական և քարոզչական իրադարձությունների անկողմնակալ լուսաբանում ապահովելուն: Մշտադիտարկման արդյունքները պետք է պարբերաբար հրապարակվեն:

Ընդհանուր առմամբ, քարոզարշավին առնչվող եթերաժամանակը ամենամեծ ժողովրդականություն վայելող *Արմենիա*, *Շանթ* և հանրային Հ1 հեռուստաընկերություններով սահմանափակ էր, և քարոզարշավի ընթացքում ամենադիտվող եթերաժամին գերակշռում էին ժամանցային ծրագրերը: *Կենտրոն հեռուստաընկերությունն* ու *Երկիր Մեդիան* ավելի շատ ժամանակ են նվիրել քարոզարշավին՝ ներառելով հեռուստահարցազրույցներ և քննարկումներ: Դրանք, սակայն, ավելի փոքր լսարան ունեն: Հիմնական հեռուստաընկերություններով, այդ թվում՝ Հ1-ով,⁷⁰ թեկնածուների բանավեճեր չեն եղել, թեև դա կարող էր մեծացնել ընտրողների մասնակիցների ընտրական ծրագրերը համեմատելու հնարավորությունը, և ընդդիմադիր թեկնածուներին թույլ կտար ուղղակիորեն բանավիճել իշխող կուսակցությունների հետ հանրության առջև:⁷¹

⁶⁹ Փետրվարի 24-ից մինչև մարտի 31-ը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն մշտադիտարկել է հանրային Հ1 և մասնավոր *Արմենիա*, *Կենտրոն*, *Շանթ* և *Երկիր Մեդիա* հեռուստաընկերությունները: Բացի այդ, մշտադիտարկվել են նաև երեք էլեկտրոնային լրատվամիջոցներ՝ *Aravot.am-ը*, *Armtimes.com-ը* և *Hetq.am-ը*:

⁷⁰ Հ1-ը տեղեկացրեց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իրենց ընկերությունը մտադիր էր բանավեճ կազմակերպել, սակայն, հիմնական կուսակցությունների գլխավոր թեկնածուների կողմից մերժում ստանալով, հրաժարվեց այդ մտքից:

⁷¹ Քարոզարշավի՝ ՁԼՄ-ների կողմից լուսաբանմանն առնչվող միջոցների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի՝ անդամ երկրներին ուղղված Հանձնարարական 15(2007)-ի 2.2

Ընտրողներին մասնակից թեկնածուների ծրագրերը համամետելու առավել մեծ հնարավորություն ընձեռելու համար կարելի է, որպես տարբերակ, հանրային հեռարձակողից պահանջել կազմակերպել թեկնածուների քարոզարշավային քանակներ:

XII. ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ

Դիմումների և բողոքների գործընթացը կարգավորվում է Ընտրական և Վարչական դատավարության օրենսգրքերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքներով: Ընտրական օրենսգրքի համաձայն, ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողություններն ու անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս հանձնաժողովին, իսկ ԿԸՀ-ի դեմ բողոքները գտնվում են վարչական դատարանի ընդդատության ներքո: Թեև բողոքարկման վերաբերյալ դրույթները վերանայվել են, ընտրական վեճերի լուծումը կարգավորող շրջանակը դեռևս մնում է չափազանց բարդ և ունի բացեր ու երկիմաստություններ, այդ թվում՝ սահմանում է դիմումներ ներկայացնելու շատ նեղ իրավունք, որոշ ոչ միատեսակ կամ կարճ ժամկետներ և ծանր պահանջներ:⁷²

Ընտրություններին առնչվող բոլոր բողոքները կարող են ներկայացվել նաև դատարաններ, սակայն, ի հետևումն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականների, Ընտրական օրենսգիրքն այժմ սահմանում է ընտրական հանձնաժողովների և դատարանների կողմից բողոքների զուգահեռ քննումը բացառող պահանջ:⁷³ Ընտրությունների արդյունքները բողոքարկող դիմումներ կարող են ներակայացվել Սահմանադրական դատարան միայն վերջնական արդյունքների հրապարակումից հետո հինգերորդ օրը (և ոչ շուտ), որը 15 օր ունի վճիռ կայացնելու համար:

Հակառակ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ նախկին հանձնարարականներից մեկին և 1990թ.-ի ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթի 5.10 պարբերության, Ընտրական օրենսգիրքը բողոք ներկայացնելու իրավունք վերապահում է միայն նրանց, որոնց անձնական ընտրական իրավունքներն են ոտնահարվել:⁷⁴ Ընտրողները, ՋԼՄ ներկայացուցիչները և դիտորդները

պարբերության մեջ նշվում է. «այն դեպքերում, երբ կանոնակարգումներով դա սահմանված չէ, անդամ երկրները պետք է ընդունեն միջոցներ, որպեսզի հանրային ՋԼՄ-ները և մասնավոր հեռարձակողները նախընտրական ժամանակահատվածում առանձնահատուկ արդար, հավասարակշռված և անկողմնակալ լինեն իրենց լրատվական և քաղաքական հաղորդումներում, այդ թվում՝ հեռուստահարցազրույցների և քանակների ընթացքում»:

⁷² Օրինակ, Ընտրական օրենսգրքի 49.1 հոդվածը պահանջում է, որ դիմումատուներն իրենց կարգավիճակը հավաստող փաստաթուղթ ներկայացնեն յուրաքանչյուր դիմումին կից: Իրավաբանների կողմից՝ անհատ դիտորդների անունից ներկայացվող դիմումներին կից պետք է ներկայացվի իրավաբանի՝ դիտորդին ներկայացնելու լիազորությունները հավաստող օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր: Ըստ տեղական դիտորդների, այս պահանջի պատճառով իրենք չեն կարողացել ժամանակին դիմումներ ներկայացնել:

⁷³ Եթե ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկվել է դատական կարգով, վարչական վարույթը մերժվում է:

⁷⁴ 1990թ.-ի ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթի 5.10 պարբերությունում ասվում է. «...բոլորը պետք է ունենան իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ընդդեմ վարչական որոշումների, հիմնարար իրավունքների պահպանումը երաշխավորելու և իրավական արդարության ապահովման նպատակով»: 2002թ.-ի Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրի բացատրական զեկույցի 99-րդ պարբերությունը նշում է, որ «[ընտրական] բողոք բերելու իրավունքը պետք է սահմանվի որքան հնարավոր է լայն

դիմումներ կարող են ներկայացնել իրենց անհատական իրավունքների ոտնահարումների դեպքերով, կուսակցությունների վստահված անդամները և հանձնաժողովների անդամները՝ իրենց և կուսակցությունների, թեկնածուների ու այլ շահագրգիռ անձանց իրավունքների ոտնահարման դեպքերով: Որոշ նոր դրույթներով դիտորդների և կուսակցությունների վստահված անձանց համար իրավունք է սահմանվել բողոքներ բերել ուրիշի փոխարեն քվեարկության դեպքերով: Ընտրություններին մասնակից կուսակցությունները, վստահված անդամները (ձայների հաշվարկին ներկա եղած լինելու պայմանով) և տվյալ ՏՀՀ անդամները կարող են տվյալ տեղամասի քվեարկության արդյունքները բողոքարկել վերադաս ԸՀ: Ընտրությունների վերջնական արդյունքները կարող են բողոքարկվել միայն ընտրություններին մասնակցող միավորների, և ոչ ընտրողների կողմից, ինչը հակասում է միջազգային չափանիշներին և լավ պրակտիկային:⁷⁵

Չնայած գործընթացի ողջ ընթացքում հնչած զգալի թվով մեղադրական պնդումներին, սահմանափակ թվով բողոքներ են ներկայացվել ընտրական վարչարարության մարմիններ և դատարաններ: Մինչև ընտրությունների օրը ԿԸՀ-ն ստացել է 18 բողոք, որից 14-ը՝ ՀԿ-ներից, որոնք, սակայն, մերժվել են դիմումատուի՝ նման բողոք բերելու իրավունք չունենալու հիմքով:⁷⁶ Չնայած դիմում - բողոքների մեծ մասը մերժվել է, ԿԸՀ-ն բողոքներից շատերը քննել է ըստ էության և իր նախաձեռնությամբ դիտարկել դրանց արձարձած խնդիրները:

Չորս դիմումներ են ներկայացվել մասնակից կուսակցություններից քարոզարշավի խախտումների, այդ թվում՝ պետական սեփականություն հանդիսացող շենքերում նախընտրական շտաբերի տեղակայման, ընտրակաշառքի, վարչական ռեսուրսի չարաշահման և պաշտոնական լիազորությունները կատարելու ընթացքում քարոզչություն իրականացնելու դեպքերի առնչությամբ: ԿԸՀ-ն մերժեց երկու դիմում, որոնցով պահանջվում էր անվավեր ճանաչել ՀՀԿ-ի ցուցակների գրանցումը վարչական ռեսուրսի չարաշահման և դպրոցների ու մակապարտեզների տնօրեններին աջակիցների անվանացուցակներ հավաքագրելու գործում ներգրավելու հիմքով՝ պատճառաբանելով, որ բավարար ապացույցներ չկան առ այն, որ ստորագրությունները հավաքագրվել են պաշտոնական լիազորությունների կատարման ժամանակ կամ քարոզարշավի ընթացքում: ԿԸՀ-ն նաև մերժեց թեկնածուներից մեկի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով դիմումը, որը ենթադրաբար քարոզարշավի խախտում էր թույլ տվել՝ ապացույցների ոչ բավարար լինելու հիմքով: ԿԸՀ-ն ժամանակ առ ժամանակ ուսումնասիրել է որոշ պնդումների փաստացի հանգամանքները, սակայն մանրագնի չի քննել վեճի առարկան, այդ թվում՝ դասատուների վրա՝ ստորագրություններ հավաքելու նպատակով ճնշումներ կամ ահաբեկումներ կիրառելու հնարավորությունը:⁷⁷ ԸՀ-ները պաշտոնական

շրջանակով: Ընտրատարածքի յուրաքանչյուր ընտրողի համար պետք է հնարավոր լինի ... բողոք ներկայացնել»: ՀԿ-ներից մեկը տեղեկացրեց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ հինգ դիմում է ներկայացրել ՄԻԵԴ բողոք բերելու իրավունքի սահմանափակ լինելու հարցով, որոնք այժմ սպասում են քննության:

⁷⁵ 2002թ.-ի Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրի II.3.3. գ մասում ասվում է, որ «Ընտրատարածքում գրանցված բոլոր թեկնածուներն ու ընտրողները պետք է ունենան բողոքարկման իրավունք: Ընտրողների կողմից ընտրությունների արդյունքների բողոքարկման նկատմամբ կարող է սահմանվել ողջամիտ քվորում»:

⁷⁶ ՀԿ-ների ներկայացրած դիմումներից մեկը քննվել է ԿԸՀ-ի կողմից ըստ էության և մերժվել: Վարչական դատարանն իր հերթին մերժեց այդ որոշման բողոքարկումը՝ դրա ներկայացման իրավունքի բացակայության հիմքով:

⁷⁷ ԿԸՀ-ն գտավ, որ տեղական իշխանություններին աջակիցների անվանացանկեր ներկայացնելը չի հակասում օրենքին, քանի որ իշխանությունները կարող են զբաղվել քարոզչությամբ: Չնայած օրենքը հստակ արգելում է պետական պաշտոնյաներին քարոզչություն իրականացնել իրենց պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում, ԿԸՀ-ն չի քննել այն հարցը, թե երբ են տեղի ունեցել այդ գործողությունները:

դիմում-բողոքներ չեն ստացել, սակայն նախաձեռնողաբար վարույթ են սկսել քարոզարշավի խախտումների, այդ թվում՝ քարոզչական նյութերի ոչնչացման մոտ 50 դեպքերի առնչությամբ: Վարչական դատարանը երկու բողոք է ստացել առաջադրվել ցանկացող անձանցից, որոնց մերժել էին տրամադրել մշտական բնակության մասին տեղեկանք, և վեց ԿԸՀ որոշումներ բողոքարկող հայցեր, այդ թվում՝ քարոզարշավային խնդիրների, ՁԼՄ ներկայացուցիչներին հավատարմագրում տրամադրելու և թեկնածուի գրանցումը մերժելու հարցերով: Բոլորը մերժվել են մեծամասամբ ձևական հիմքերով: Վարչական դատարանն սկսեց լսել ԿԸՀ այն որոշման բողոքարկումը, որով մերժվել էր անվավեր ճանաչել ՀՀԿ ցուցակները վարչական ռեսուրսի չարաշահման հիմքով, թեև բողոքը ԵԼՔ դաշինքի և նրա երկու թեկնածուների կողմից ներկայացվել էր ընտրությունների նախօրյակին՝ սահմանված ժամը 18.00-ի վերջնաժամկետից հետո: Սակայն դատարանն ընդհատեց վարույթը կեսգիշերին՝ հաշվի չառնելով ներկայացված նշանակալի ապացույցները, քանի որ լսումն անցել էր քննելու համար օրենքով սահմանված ժամկետը:⁷⁸ Ոչ բավարար ժամկետների, վեճերի ոչ միատեսակ կերպով լուծման և դիմում-բողոքների քննման եղանակի պատճառով խաթարվեց դիմումատուների արդյունավետ միջոցի ապահովումը:⁷⁹

Գլխավոր դատախազը աշխատանքային խումբ է ստեղծել ընտրախախտումների մասին հաղորդումները հետաքննելու համար: Մինչև ընտրությունների օրը աշխատանքային խումբը դիտարկել է ընտրակաշառքի և ընտրական իրավունքի իրացմանը խոչընդոտելու հետ կապված՝ մեծամասամբ ՁԼՄ աղբյուրներից ստացված մոտ 220 գործ: Դրանցից 58-ը, այդ թվում՝ ընտրակաշառքին առնչվող 38 դեպքեր, ուղարկվել են ոստիկանություն հետազոտության:⁸⁰ Բոլոր գործերը մերժվել են ապացույցների անբավար լինելու հիմքով:⁸¹ Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանը դիտարկել է իր թեժ գծի միջոցով, գրավոր կամ ՁԼՄ հրապարակումներից ստացված 148 հաղորդումներ՝ հիմնականում կապված քարոզարշավի խախտումների հետ, որոնցից 5-ը ուղարկել է իրավապահ մարմիններին, որոնք էլ դեպքերի մեծ մասում չեն գտել բավարար ապացույցներ գործին ընթացք տալու համար:

Չնայած 2016թ.-ի ընթացքում Քրեական օրենսգրքի որոշ բարեփոխումներով ապաքրեականացվում էր ընտրակաշառք վերցնելը, այդ մասին հաղորդելու դեպքում, ձայների առքուվաճառքի դեպքերի մասին հաղորդում տալուց համընդհանուր խուսափողականությունը շարունակվել է:⁸² ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ գրուցակիցներից շատերը նշեցին, որ հանրության մոտ առկա է ընտրախախտումների մասին հաղորդում տալու հարցում համընդհանուր խուսափողականություն՝ բողոքների քննման համակարգի արդյունավետության նկատմամբ անվստահության և դատական, ընտրական վարչարարության համակարգերի ու իրավապահ մարմինների ոչ լիարժեք անկախության պատճառով:⁸³ Դատարանների և ընտրական

⁷⁸ Վարչական դատարանը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրեց, որ հետևել էր վարչական վարույթի կանոններին, որոնք թույլ են տալիս դիմում-բողոքներ ընդունել մինչև օրվա վերջը:

⁷⁹ Չնայած մի դեպքում դատարանն ընդունել էր Ասպարեզ լրագրողների ակումբի բողոքը և ԿԸՀ որոշումների բողոքարկման վերջնաժամկետը հաշվել դիմումատուի կողմից դրանք ստանալու պահից, երկու այլ դեպքերում դատարանը մերժեց Թրանսպարենսի Ինթերնեշնլի ներկայացրած բողոքները՝ նշելով, որ վերջնաժամկետը հաշվվում է ԿԸՀ որոշման հրապարակման պահից:

⁸⁰ Այդ հաղորդումները ստացվել են տարբեր ՁԼՄ աղբյուրների մշտադիտարկման, քաղաքացիների կողմից թեժ գծով զանգերի և անհատների կողմից հաղորդումներ տալու միջոցով:

⁸¹ Օրենքը նաև ավելի կարճ ժամկետներ չի սահմանում ընտրախախտումների համար. կիրառվում են սովորական քրեական վարույթի կանոնները:

⁸² Քաղաքացիների կողմից եղել է ընտրակաշառքի մասին միայն երկու հաղորդում իրավապահ մարմիններին:

⁸³ [2015թ.-ի ԳՐԵԿՈ-ի Հայաստանի վերաբերյալ՝ ԱԺ պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման մասին Կոռուպցիայի գնահատման զեկույցը](#) դատական համակարգի անկախությունը գնահատում է որպես անբավարար: Տե՛ս նաև

վարչարարության մարմինների կողմից բողոքները քննելու ձևն առավել ևս խաթարեց ընտրական վեճերի լուծման համակարգի արժանահավատությունը և իրավական պաշտպանության արդյունավետությունը, ինչը հակասում է 1990թ.-ի ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթի 5.10 պարբերությանը և այլ միջազգային չափանիշներին:⁸⁴

Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի ապահովման համար ԿՀՀ-ն և դատարանները պետք է լիարժեք և անկողմնակալ կերպով քննեն բողոքներն ըստ էության, գործեն անաչառ, թափանցիկ և պատշաճ իրավական գործընթացի շրջանակներում: Ճնշումների կամ սահմանների մասին ցանկացած հաղորդում պետք է խստորեն հետաքննվի և հետապնդվի իշխանությունների կողմից:

XIII. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ

Օրենքը սահմանում է ընտրությունների միջազգային և տեղական դիտարկման իրականացում և թույլատրում է կուսակցությունների վստահված անձանց ներկայությունը տեղամասային կենտրոններում: Հավատարմագրվելու համար տեղական դիտորդների խմբերից պահանջվում է ընդունել իրենց դիտորդների վարքագծի կանոններ և իրականացնել ներքին ուսուցումներ: Հակառակ նախկին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականներին, Ընտրական օրենսգիրքը տեղական դիտորդների խմբերից պահանջում է իրենց կանոնադրությունում հստակ կերպով ներառել ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության նպատակներ ընտրությունները նշանակելու օրվան նախորդող առնվազն մեկ տարվա ընթացքում, ինչը նվազեցնում է դիտարկման հնարավորությունը: Այդ պահանջը չբավարարելու հիմքով ԿՀՀ-ն մերժեց երկու հասարակական կազմակերպությունների հավատարմագրումը:⁸⁵ Որոշ ՀԿ-ներ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրին, որ դիտորդական հավատարմագրման դիմումը ընտրությունների օրվանից 15 օր առաջ ներկայացնելու պահանջը ևս խանգարել է դիտորդներ հավաքագրելու հարցում: Լրատվամիջոցներն ու քաղաքացիական հասարակությունը քննադատություն հնչեցրին Ընտրական օրենսգրքի այն դրոյթների կապակցությամբ, որոնցով հնարավորություն էր սահմանվում ընտրողաբար սահմանափակել ընտրատեղամասերում տեղական դիտորդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների թիվը, սակայն դա խնդիր չի հարուցել ընտրությունների օրը:⁸⁶

Համաձայն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականների, նորաստեղծ հասարակական կազմակերպությունների կողմից ընտրությունների դիտարկում իրականացնելու արգելքի մասին դրույթը պետք է վերանայվի, իսկ դիտորդների հավատարմագրման համար դիմելու վերջնաժամկետը կարելի է սահմանել ընտրությունների օրվան ավելի մոտ:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի [«Հայաստանի մասին եզրափակիչ դիտարկումներ»](#)-ի (31-ը օգոստոսի, 2012թ.), CCPR/C/ARM/CO/2, 21-րդ պարբերությունը:

⁸⁴ ՔՔԻՄԴ 2.3 (ա) հոդվածում նշվում է. «... ցանկացած անձի համար, ում [հիմնարար] իրավունքներն ու ազատությունները ...խախտված են, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց»:

⁸⁵ ԿՀՀ-ն մերժեց հավատարմագրել «Քաղաքացիական շտաբ»-ին, որը նախկինում հավատարմագրվել էր և դիտարկել 2016թ.-ի հոկտեմբերի ՏԻՄ ընտրությունները, և «Հյուսիսային դարպաս»-ին, որ ստեղծվել էր 2016թ.-ի ապրիլի 28-ին:

⁸⁶ Այդպիսի սահմանափակումներ կարող են կիրառվել միայն ՏՀՀ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, և ամեն դեպքում դիտորդների թվի սահմանափակումը չի կարող լինել 15-ից ցածր: Այցելումները, միջազգային դիտորդները և հեռուստատեսության ներկայացուցիչները ազատված են այս սահմանափակումից:

ԿԸՀ-ն հավատարմագրել է 49 տեղական հասարակական կազմակերպություններ՝ ընդհանուր թվով 28,021 դիտորդներով, ինչպես նաև 640 միջազգային դիտորդների: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ի զրուցակիցներից ոմանց կարծիքով որոշ տեղական ՀԿ-ներ փոխկապակցված էին տարածքային թեկնածուների հետ: Ընտրությունների դիտարկման ցանկություն հայտնած բոլոր միջազգային ՀԿ-ներին մերժվել էր դիտարկման հրավեր ուղարկելը այն պաշտոնական պատճառաբանությամբ, որ արդեն իսկ մեծ թվով դիտորդներ էին հավատարմագրվել, ինչը, սակայն, հակասում է ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին:⁸⁷

Իշխանությունները պետք է դիտորդներ հրավիրեն միջազգային ՀԿ-ներից և այլ համապատասխան հաստատություններից և դյուրացնեն նրանց մասշտաբը ընտրական գործընթացի բոլոր փուլերին, առանց անհարկի սահմանափակումների:

XIV. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԸ

Ա. ՄԵԿԱՐԿ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ընտրությունների օրն ընդհանուր առմամբ անցել է հանգիստ և խաղաղ, առանց երկրի տարածքում լուրջ միջադեպերի մասին հաղորդումների: Այնուհանդերձ, ԸՄԴԱ դիտորդները տեղամասային կենտրոնների ներսում և դրսում նկատել են լարվածության և ընտրողների ահաբեկման դեպքեր: Դա ընդհանուր առմամբ արդյունք էր ողջ օրվա ընթացքում տեղամասային կենտրոնների հարակից տարածքներում մեծ թվով վստահված և այլ անձանց ներկայության: Մարդկանց մեծաթիվ խմբեր էին հավաքված տեղամասային կենտրոնների անմիջական հարևանությամբ դիտարկված տեղամասերի 30 տոկոսում, լարվածություն է արձանագրվել 6 տոկոսում և ընտրողների ահաբեկման դեպքեր՝ 4.5 տոկոսում: Ոստիկանությունը հետևողականորեն չի իրականացրել տեղամասային կենտրոնների առջև հավաքվելու օրենսդրական արգելքի պարտադրումը:⁸⁸

Տեղամասային կենտրոնների բացումը դրական է գնահատվել ԸՄԴԱ-ի կողմից դիտարկված դեպքերի 98 տոկոսում: Ընթացակարգերն ընդհանուր առմամբ պահպանվել են, և տեղամասային կենտրոնները բացվել են ժամանակին: Այնուհանդերձ, դիտարկված տեղամասերի հինգ տոկոսում քվեատուփերը դատարկ վիճակում չեն ցուցադրվել ու այնուհետև կնքվել:

Քվեարկության ընթացքը բացասական է գնահատվել ԸՄԴԱ դիտորդների կողմից դիտարկված դեպքերի 12 տոկոսում, ինչը մեծ թիվ է և մտահոգիչ: Դա առաջին հերթին եղել է կուտակումների (դիտարկումների 26 տոկոսը), հերթերի ոչ բավարար վերահսկման (12 տոկոս) և ընտրական ընթացակարգերն ըմբռնել դժվարացող ընտրողների (35 տոկոս) դեպքերի պատճառով: Ընտրողների ահաբեկման դեպքերի մասին ավելի հաճախ հաղորդումներ են ստացվել մեծ

⁸⁷ Ի թիվս այլոց, ընտրությունների դիտարկման հրավեր ուղարկելը մերժվել էր «Ընտրությունների մոնիտորինգի կազմակերպությունների եվրոպական ցանցին» և «Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական հարթակին»: 1999թ.-ի ԵԱՀԿ Ստամբուլի փաստաթղթի 25-րդ պարբերությունում անդամ երկրները վերահաստատել են իրենց պարտավորությունը «մեր ընտրություններին հրավիրել դիտորդներ այլ անդամ պետություններից, ԺՀՄԻԳ-ից, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովից և այլ համապատասխան հաստատություններից ու կազմակերպություններից, որոնք ցանկանում են դիտարկել մեր ընտրական գործընթացները»:

⁸⁸ Ընտրական օրենսգրքը արգելում է տեղամասային կենտրոնին հարող մինչև 50 մետր շառավղով տարածքում խմբերով հավաքվելը:

մարդկային կուտակումներով տեղամասային կենտրոններից՝ համեմատած այլ դիտարկվող տեղամասերի հետ: Նույն կերպ, ԸՄԴԱ դիտորդները լարվածություն են արձանագրել իրենց դիտարկված մարդկային կուտակումներով տեղամասերի 13 տոկոսում և մյուսների՝ 3 տոկոսում: Այս դիտարկումները բերում են այն եզրակացության, որ տեղամասային կենտրոններում մարդկային կուտակումների հարցին պետք է տալ համակարգային լուծում:

Պետք է միջոցներ ձեռնարկել տեղամասային կենտրոններում կուտակումներից խուսափելու համար: Կարելի է դիտարկել ժամանակի և շարժման ուսումնասիրություն իրականացնելու տարբերակը տեղամասերում ընտրողների թվի կարգավորման, բավականաչափ ընդարձակ տարածքներ գտնելու կամ տեղամասերի թիվը մեծացնելու համար:

Թեև ընթացակարգերն ընդհանուր առմամբ պահպանվել են, ընտրողները միշտ չէ, որ քվեարկել են գաղտնի (2 տոկոս), և դիտարկված տեղամասերի 10 տոկոսում նկատվել են խմբակային ու ընտանեկան քվեարկության դեպքեր: ԸՄԴԱ դիտորդները նկատել են որոշ կոպիտ խախտումների դեպքեր, այդ թվում՝ ընտրողների քվեարկության վրա ներգործելու (դիտարկումների 2 տոկոսը), այլ անձի փոխարեն քվեարկելու (2 տոկոսը) և նույն անձի կողմից տարբեր ընտրողների քվեախցիկ ուղեկցելու դեպքեր (3 տոկոսը):⁸⁹

Կուսակցությունների վստահված անձինք ներկա են եղել դիտարկված տեղամասային կենտրոնների 97 տոկոսում, իսկ տեղական դիտորդները՝ 94 տոկոսում, ինչը նպաստել է գործընթացի թափանցիկությանը: Այնուհանդերձ, դիտարկված 12 դեպքերում արձանագրվել են վստահված անձանց, տեղական դիտորդների, տեղական պաշտոնատար անձանց կամ ոստիկանություն կողմից ընտրությունների ընթացքին միջամտելու դեպքեր:

ԸԳՍ-երի միջոցով ընտրողների ինքնության ստուգումն ընթացել է արդյունավետ կերպով և առանց նշանակալի խնդիրների:⁹⁰ ԸՄԴԱ դիտորդները որոշ խնդիրներ են արձանագրել կապված ընտրողների անձը հաստատող փաստաթղթերի և մատնահետքերի հետ, սակայն դա չի հանգեցրել քվեարկության նշանակալի խաթարման:⁹¹ ԸՄԴԱ դիտորդները արձանագրել են բազմակի քվեարկության փորձի 9 դեպք, որոնք բացահայտվել են ԸԳՍ-երի կողմից և ուստի՝ կանխվել: ԸԳՍ-երը ընտրողներին վերաուղղորդելու հնարավորություն են տվել այն դեպքերում, երբ նրանք գրանցված էին նույն ընտրատարածքի այլ տեղամասերում, և այդպիսի դեպքեր գրանցվել են 55 տեղամասային կենտրոններում:

Բշխանությունները պետք է շարունակեն արդյունավետ երաշխիքներ ստեղծել ընդդեմ բազմակի քվեարկության և ի սպառնալուսն քվեարկության գաղտնիության, և դրանք պետք է ի գործ դնեն պատշաճ ու հետևողական կերպով: Դա կարող է լինել ընտրությունների վարչական անձնակազմի առավել խորացված ուսուցման և ընտրողների առավել թիրախային իրազեկման միջոցով, ինչպես նաև պահանջելով, որ ընտրողները տեղեկացված լինեն տեղամասերում իրենց

⁸⁹ Գլխավոր դատախազությունը 1594 հաղորդումներ է գրանցել ընտրությունների օրը ենթադրյալ ընտրակեղծիքների մասին, այդ թվում՝ ընտրակաշառքի, քվեարկության գաղտնիության խախտման և այլ անձի փոխարեն քվեարկելու դեպքերի առնչությամբ: Մոտ 254 դեպք ուղարկվել է իրավապահ մարմիններին հետազոտության: Ոստիկանության կողմից գրանցված 176 դեպքից 32-ը ուղարկվել է հետազոտության:

⁹⁰ ԿԸՀ-ն տեղեկացրեց, որ որոշ ԸԳՍ-եր ստիպված են եղել փոխարինել անսարքության պատճառով:

⁹¹ ԿԸՀ-ն տեղեկացրեց, որ անձնագրերն ու նույնականացման քարտերը հնարավոր չի եղել սքանավորել քվեարկությանը մասնակցած բոլոր ընտրողների 14,6 տոկոսի դեպքում: Նման դեպքերում վավերական անձը հաստատող փաստաթղթի տվյալները ձեռքով մուտքագրվել են ԸԳՍ-երի մեջ, և ընտրողները կարողացել են քվեարկել:

գաղտնիության իրավունքի ու պարտավորության մասին: Հետագա քայլեր պետք է ձեռնարկվեն նաև չարտոնված անձանց կողմից քվեարկության ընթացքին միջամտելը կանխելու ուղղությամբ:

Առաջին անգամը լինելով՝ այս ընտրությունների ժամանակ տեսախցիկներ էին տեղադրվել ամենամեծ 1499 տեղամասային կենտրոններում՝ հնարավորություն ստեղծելով տեսանկարահանել և համացանցով դիտարկել ընտրությունների օրվա գործընթացները:⁹² Տեխնիկական խնդիրների պատճառով հանրային առցանց ցուցադրումը հասանելի չի եղել բոլոր տեղամասերի պարագայում, հատկապես ընտրությունների օրվա առավոտյան, այնուհանդերձ, ԿՀՀ-ն և ընտրություններին մասնակցող կուսակցությունները ողջ օրվա ընթացքում անընդհատ մատչում են ունեցել բոլոր տեսախցիկներին՝ սերվերներին ուղիղ միացում ունենալու շնորհիվ:⁹³ Տեղամասերի փակումից հետո դրանցից շատերի կահավորանքը ՏՀՀ-ների կողմից վերադասավորվել է այնպես, որ ձայների հաշվարկն ըստ էության հնարավոր չլինի դիտել տեսախցիկներով:

Ընտրական օրենսգիրքը ստացիոնար բուժման մեջ գտնվող հիվանդների համար սահմանում է շրջիկ արկղով քվեարկություն, որոնց ցուցակները կազմվում են հիվանդանոցների ղեկավարության կողմից, ընտրություններից երեք օր առաջ:⁹⁴ Մյուս ընտրողներից և ոչ մեկի համար շրջիկ արկղով քվեարկելու հնարավորություն սահմանված չէ, ինչը հանգեցրեց տարեց և տանը գամված ընտրողների՝ ընտրություններին մասնակցության կրճատման: ԸՄԴԱ-ն արձանագրեց, որ դիտարկված տեղամասերի 69 տոկոսը հասանելի չէր ֆիզիկական հաշմանդամություն և տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար: Այդպես լիարժեք կերպով չի երաշխավորվում բոլոր ընտրողների կողմից ընտրական իրավունքի հավասար իրացումը, ինչպես պահանջվում է ԵԱՀԿ-ի առջև ստանձնած և այլ միջազգային պարտավորություններով:⁹⁵

Ընտրական իրավունքի հավասար իրացումը երաշխավորելու նպատակով իշխանությունները պետք է դիտարկեն ֆիզիկական հաշմանդամություն և տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար քվեարկության ընթացակարգերի հասանելիությունը մեծացնող միջոցների ձեռնարկում:

Բ. ՁԱՅՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ ԵՎ ԱՐՅՈՒՄԱԿԱՎՈՐՈՒՄ

Ձայների հաշվարկն ընդհանուր առմամբ ընթացել է թափանցիկության պայմաններում, ներկաները հիմնականում լավ իրագրված են եղել հաշվարկի ընթացակարգին և հնարավորություն են ունեցել դիմումի հիման վրա դիտել քվեաթերթիկները: Հաշվարկի

⁹² Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ տեսանկարահանող սարքեր պետք է տեղադրվեն բոլոր ընտրատեղամասերում, սակայն այդպես չի արվել ֆինանսական սահմանափակումների պատճառով:

⁹³ Մոտ 30 տեսախցիկների աշխատանքը խափանվել է տարբեր պահերի, ենթադրաբար հոսանքազրկումների պատճառով:

⁹⁴ Շրջիկ արկղով քվեարկելու համար գրանցվել է ընդամենը 2001 ընտրող՝ հիվանդանոցներում:

⁹⁵ ՀԱԻԿ-ի հոդված 29(ա)-ն պետություններին պարտավորեցնում է «ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան լիարժեք և արդյունավետ կերպով մասնակցել քաղաքական և հանրային կյանքին՝ մյուսների հետ հավասար հիմունքներով ... *ի թիվս այլոց*, ապահովելով, որ քվեարկության ընթացակարգերը, շենքերը և այլ պայմանները լինեն համապատասխան, մատչելի և ... օգտագործողին հարմար». Տե՛ս նաև 1990թ.-ի ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթի 7.3 պարբերությունը և 1991թ.-ի ԵԱՀԿ Մոսկվայի փաստաթղթի 41.1 պարբերությունը:

գործընթացը բացասական գնահատականի է արժանացել դիտարկումների 32 դեպքերում, հիմնականում չարտոնված անձնաց միջամտության պատճառով, որոնք ուղղակիորեն մասնակցել են հաշվարկին դիտարկված 36 դեպքերում: Թափանցիկությունը որոշ դեպքերում խաթարվել է հաշվվող քվեաթերթիկները ոչ բոլոր ներկաներին ցույց տալու (7 դիտարկում), ինչպես նաև տարածքային թեկնածուների քվեաթերթիկները մեկ առ մեկ չհաշվելու պատճառով (19 դեպք):

ԸՄԴԱ դիտորդներն իրենց դիտարկած ձայների հաշվարկի ընթացքում արձանագրել են լարվածության կամ հուզումների 14 դեպք, և ՏՀՀ անդամներին ահաբեկելու 8 դեպք: Ընթացակարգերն ընդհանուր առմամբ պահպանվել են, սակայն ՏՀՀ-ները քվեաթերթիկների վավերականությունը չեն գնահատել նույնական չափանիշներով (դիտարկման 11 դեպք) և ողջամտորեն (դիտարկման 16 դեպք): 57 տեղամասերում դիտորդները հաղորդել են տարածքային թեկնածուների քվեաթերթիկի անվավեր ճանաչման մեկ կամ մի քանի դեպքերի մասին, թեպետ ընտրողի կամարտահայտությունը հստակ էր:⁹⁶

Դիտարկումն արձանագրել է 24 դեպք, երբ ՏՀՀ-ները դժվարություններ են ունեցել արդյունքների ամփոփման արձանագրությունը լրացնելու հարցում, որոնք անհամապատասխանություններ էին պարունակում 9-ը դեպքում և նախապես ստորագրված էին ՏՀՀ անդամների կողմից 12 դեպքում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՄԴԱ-ն իրականացրել է բոլոր մարզերից ԸՄԴԱ դիտորդների վերցրած 77 արձանագրությունների քաղվածքների համեմատական ստուգում: Դրանց մեկ երրորդից ավելին (29-ը) պարունակում էին թվերի մանր անճշտություններ կապված թվաբանական սխալների հետ:

Ընտրական վարչարարությունը պետք է հետևի հաշվարկի բոլոր սահմանված ընթացակարգերին և շտկի համաձայնեցման գործընթացի ընթացքում հայտնաբերված ընթացակարգային սխալներն ու բաղթողումները:

Աղյուսակավորման գործընթացն սկսվեց ՏՀՀ-ների կողմից արդյունքների ամփոփման արձանագրություններն ԸՀՀ-ներ ներկայացնելուց անմիջապես հետո: ԸՀՀ-ների կողմից ՏՀՀ-ների կազմած արդյունքների ամփոփման արձանագրությունների հետ աշխատանքն ընդհանուր առմամբ լավ էր կազմակերպված, և ԸՄԴԱ դիտորդներն աղյուսակավորման գործընթացը դրական են գնահատել դիտարկված 38-ից 29 ԸՀՀ-ներում: Այնուհանդերձ, դիտարկման 23 դեպքերում արձանագրություններն ստանալու և գրանցելու համար նախատեսված հարմարությունները գնահատվել են ոչ համապատասխան: Բացի այդ, 24 դեպքերում դիտարկումն արձանագրել է, որ մեծ թվով մարդկանց ներկայությունը բացասաբար է անդրադառնում գործընթացի վրա: Չարտոնված անձանց (հիմնականում ոստիկաններ) ներկայություն է գրանցվել ինը ԸՀՀ-ներում: Հաղորդումներ են եղել արձանագրություններում թվերի փոփոխման դեպքերի մասին թվաբանական սխալի պատճառով, սակայն ԸՄԴԱ-ի կողմից դիտավորությամբ իրականացվող կեղծարարության փորձեր չեն արձանագրվել:

ԿՀՀ-ն ըստ տեղամասերի նախնական արդյունքների առցանց հրապարակումն սկսել է կեսգիշերից քիչ անց՝ նպաստելով աղյուսակավորման գործընթացի թափանցիկությանը:

96

Այդ քվեաթերթիկների վրա արվել էր ԿՀՀ-ի կողմից սահմանված նմուշի «V» նշանից տարբերվող նշան:

XV. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, 38 ԸԸՀ-ներից 37-ից ստացվել են թվով 324 բողոքներ:⁹⁷ Թեև, ըստ օրենքի, ԸԸՀ-ները ԿԸՀ-ի կողմից արդյունքների ամփոփումից մինչև մեկ օր առաջ ժամանակ ունեն բողոքների մասին վճիռ ընդունելու համար, ԿԸՀ-ն ընդունեց միայն այն դիմումներն ու բողոքները, որոնք ստացել էր արդյունքների ամփոփումից մինչև երկու օր առաջ՝ այդպիսով խաթարելով արդյունավետ միջոցի իրավունքը:⁹⁸ Բացի այդ, մի շարք ԸԸՀ-ներ բողոքների հետ կապված որոշումներ են ընդունել վերջնաժամկետին շատ մոտ ժամկետներում՝ խիստ սահմանափակ ժամանակ թողնելով այդ որոշումները ԿԸՀ բողոքարկելու համար:

ԸԸՀ-ներին 12 ՏԸՀ-ներում ձայների վերահաշվարկի չորս դիմում է ներկայացվել այնպիսի թեկնածուների կողմից, որոնք ներկա չէին եղել ձայների հաշվարկին, ուստի դիմումները մերժվել են:⁹⁹ Երեք այլ բողոքներ ներկայացվել են վերջնաժամկետից հետո և մերժվել նույն հիմքով: Կոնգրես-ՀԺԿ դաշինքի կողմից թիվ 35 ԸԸՀ-ին ներկայացվել է երեք տեղամասերում ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մեկ դիմում, որն այնուհետ մերժվել է ապացույցների ոչ բավարար լինելու հիմքով:

Ընտրությունների օրը ԿԸՀ-ն ստացել է ՀՅԴ-ի կողմից ներկայացված մեկ բողոք՝ քվեարկության գաղտնիության ենթադրյալ խախտման վերաբերյալ: Այն ուղարկվել է համապատասխան ԸԸՀ, որն անվավեր է ճանաչել ընտրությունների արդյունքները մեկ տեղամասում՝ նշված հիմքով, և գործն ուղարկել է դատախազություն հետագա հետաքննության: Ընտրությունների օրվանից հետո և նախքան վերջնական արդյունքների հրապարակումը, ԿԸՀ-ն ստացել է 12 բողոք, որոնցից 3-ը՝ կապված քարոզարշավի խախտումների հետ: Կոնգրես-ՀԺԿ-ն ներկայացրել է ընտրությունների արդյունքները ողջ հանրապետության տարածքում անվավեր ճանաչելու դիմում մի շարք հիմքերով, որոնց թվում նշվում էին սահմանադրության խախտումով ընտրությունների օրը նշանակելը, վարչական ռեսուրսի չարաշահումը, այլ անձի փոխարեն քվեարկելու և այլ խախտումների դեպքեր: ԿԸՀ-ն բողոքը մերժեց հիմնավորված չլինելու հիմքով, գտնելով, որ դիմումատուն չի ապացուցել, որ ենթադրյալ խախտումները նշանակալի ազդեցություն են ունեցել ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա:¹⁰⁰ ԸԸՀ որոշումների 100 բողոքարկումներ են ներկայացվել ԿԸՀ ապրիլի 10-ին, վերջնական արդյունքների հրապարակումից հետո: ԿԸՀ-ն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրեց, որ այդ բողոքները քննվելու են բողոքարկման համար ընդունված ժամկետից հետո 30 օրվա ընթացքում:

Ընտրական վեճերի լուծման համակարգի համար շատ շահեկան կլինի այն լրացուցիչ վերանայելը՝ սույն և նախկին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցներում մատնանշված բացերի և երկիմաստությունների վերացման նպատակով, այդ թվում՝ բողոք բերելու իրավունքն ընդլայնելով և բողոքների քննման համար ողջամիտ և բավականաչափ երկար ժամկետներ

⁹⁷ Բացի այդ, 561 ՏԸՀ-ներում արձանագրվել և ԸԸՀ-ների կողմից քննվել է 1,487 բողոք: Բոլոր ԸԸՀ-ները հայտարարել էին, որ արձանագրված խախտումները նշանակալի ազդեցություն չեն ունեցել ընտրությունների արդյունքների վրա:

⁹⁸ Վերջնաժամկետից հետո ԿԸՀ-ի ստացած բողոքները չեն արտացոլվել արդյունքների ամփոփման մասին վերջինիս որոշման մեջ:

⁹⁹ Ըստ Ընտրական օրենսգրքի՝ համապատասխան իրավունք ունեցողներից վերահաշվարկ պահանջել կարող են միայն նրանք, ովքեր ներկա են եղել ձայների հաշվարկին:

¹⁰⁰ Համապատասխան ԸԸՀ-ների միջնորդությունների հիման վրա ԿԸՀ-ն անվավեր ճանաչեց ութ ՏԸՀ նախագահների արտոնագրերը Ընտրական օրենսգրքի խախտման հիմքով, իսկ այնուհետև նաև մեկ ՏԸՀ-ի բոլոր անդամների արտոնագրերը, որտեղ արդյունքներն անվավեր էին ճանաչվել:

սահմանելով: Բոլոր ընտրական բողոքները պետք է քննվեն ընտրությունների ժամանակահատվածում և նախքան ընտրությունների արդյունքների վերջնական ամփոփումը:

Ընտրությունների օրը և դրանից հետո Գլխավոր դատախազությունը ստացել է ենթադրյալ ընտրախախտումների վերաբերյալ մոտ 2900 հաղորդումներ, որոնցից 850-ը ուղարկվել են համապատասխան իրավապահ մարմիններ՝ հետաքննության: Դրանցից 723-ը մերժվել են հիմնավորված չլինելու հիմքով, հարուցվել է 19 քրեական գործ, որից 12-ը՝ այլ անձի փոխարեն քվեարկելու կամ բազմակի քվեարկության, 3-ը՝ քվեարկության գաղտնիության խախտման և 3-ը՝ լրագրողական գործունեությանը խոչընդոտելու, իսկ 1-ը՝ ընտրակաշառքի դեպքերի առնչությամբ: Ոստիկանության ստացած ենթադրյալ ընտրախախտումների վերաբերյալ 719 հաղորդումներից 299-ը մերժվել են հիմնավորված չլինելու հիմքով, իսկ մնացած գործերը սույն զեկույցը գրելու պահին դեռ քննության ընթացքի մեջ էին:

Ընտրությունների օրվանից հետո վարչական դատարանը ստացել է դիտորդների իրավունքների խախտմանն առնչվող չորս բողոք և մեկ բողոքարկում՝ կապված ԿԸՀ-ի կողմից ընտրողների մատնահետքերի համապետական խաչաձև ստուգում չիրականացնելու հետ:¹⁰¹ Բոլոր բողոքները մերժվել են հիմնավորված չլինելու հիմքով:

Ապրիլի 14-ին՝ բողոքարկումների վերջին օրը, Կոնգրես-ՀԺԿ դաշինքն ընտրությունների արդյունքները բողոքարկեց Սահմանադրական դատարան: Բողոքում Կոնգրես-ՀԺԿ-ն նշել էր, որ տեղի են ունեցել բազմաթիվ համակարգային խախտումներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա: Խախտումների թվում վկայակոչվում էին պետական ռեսուրսի չարաշահումը, պետական և կուսակցական գործունեության սահմանների խախտումը, ընտրակաշառքի կիրառումը և քվեարկության գաղտնիության խախտումը: Կոնգրես-ՀԺԿ-ն իր բողոքը մեծամասամբ հիմնել էր տեղական դիտորդների զեկույցների վրա և պահանջում էր բոլոր ընտրատեղամասերի տեսագրությունների վերադիտում:

Չորս օր տևած լսումներից հետո, ապրիլի 28-ին Սահմանադրական դատարանն անփոփոխ թողեց ընտրությունների արդյունքների մասին ԿԸՀ որոշումը: ՄԴ-ն գտավ, որ դիմումատուների նեկայացրած ապացույցների մեծ մասը հիմնավորված չէր:¹⁰² Այն նաև գտավ, որ դիմումատուները չեն օգտագործել օրենքով ընձեռված ընտրությունների օրը հնարավոր խախտումների հարցերը բարձրացնելու հնարավորությունը, ինչպես օրինակ, ՏԸՀ արձանագրությանը կից հատուկ կարծիք կազմելը, այլ միայն այդ հարցերը ներկայացել էին ԿԸՀ-ին և Սահմանադրական դատարանին՝ այդպիսով չսպառնելով բոլոր հասանելի իրավական միջոցները:

Բողոքը մերժելով հանդերձ՝ Սահմանադրական դատարանն ընդգծեց, որ դիմումատուի բարձրացրած հարցերը պետք է լուծում գտնեն, ինչպես օրինակ, ձայների առքուվաճառքը, տեղամասերի մակարդակում արդյունքների անվավեր ճանաչման կարգի անորոշությունը, խորհրդարանի առաջին նիստը հրավիրելու ժամկետները և ընտրական վեճերի լուծման ոչ բավարար պարզ ընթացակարգերը:¹⁰³ Սահմանադրական դատարանն ընդգծեց, որ անհրաժեշտ

¹⁰¹ Վարչական դատարանը գտավ, որ մատնահետքերի մասին տեղեկություններ կցելը կամ դրա վերստին ստուգումը պարտավորություն չէ, այլ ԿԸՀ-ի հայեցողական լրագրությունը, և ուստի դատարանն իրավասու չէ պարտադրել ԿԸՀ-ին կատարել դիմումատուի պահանջը:

¹⁰² Ե՛վ Գլխավոր դատախազը, և՛ ԱԿՎ պետը, որոնք ներկա էին լսմանը, հայտարարեցին, որ իրենց հաստատությունների կողմից օրենքի որևէ լայնատարած խախտում չի հայտնաբերվել ընտրությունների ողջ ժամանակահատվածում:

¹⁰³ Սահմանադրական դատարանն ընդգծեց, որ ՄԴ-ի կողմից տարբեր տիպի բողոքների քննման ընթացակարգերը պետք է հստակեցվեն և բավարար մանրամասնությամբ շարադրվեն օրենքում:

են իրավական բարեփոխումներ, այդ թվում՝ այնպիսի մեխանիզմների սահմանում, որոնք կարող են նվազեցնել ընտրական գործընթացում քաղաքական կոռուպցիայի հնարավոր ռիսկերը:

XVI. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Սույն փաստաթղթի որջ տեքստում ներառված հանձնարարականները տրվում են Հայաստանում ընտրությունների անցկացման հետագա բարելավման և դրանք ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորությունների, ինչպես նաև ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային պարտավորությունների ու չափանիշների հետ լիարժեք ներդաշնակեցմանն ուղղված ջանքերին աջակցելու նպատակով: Սույն հանձնարարականները պետք է ընթերցվեն նախկին՝ դեռևս չկատարված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հանձնարարականների հետ միասին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը պատրաստակամություն է հայտնում աջակցել ՀՀ իշխանություններին ընտրական գործընթացների հետագա բարելավման և սույն, ինչպես նաև նախկին զեկույցներում ներառված հանձնարարականների կատարման հարցում:¹⁰⁴

Ա. ԱՌԱՋՆԱԶԵՐԹ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

1. Իշխանություններն ու քաղաքական կուսակցությունները պետք է առավելագույն միջոցներ ձեռնարկեն ընտրությունների արդարության նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու ուղղությամբ, այդ թվում՝ քաջալերելով հանրությանը, որ խուսափեն ձայների առքուվաճառքից, և ապահովելով, որ քաղաքացիների նկատմամբ ճնշումներ չգործադրվեն քարոզարշավի միջոցառումներին հաճախելու և այս կամ այն կերպ քվեարկելու համար:
2. Հետագա ջանքեր են անհրաժեշտ իրավական դաշտի բարեփոխման համար, սույն զեկույցում, ինչպես նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականներում մատնանշված բացերի և երկիմաստությունների շտկման նպատակով: Ցանկացած փոփոխություն պետք է հիմնվի լայն շրջանակով խորհրդակցությունների վրա և ընունվի հաջորդ ընտրությունների անցկացումից բավականաչափ ժամանակ առաջ:
3. Օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու և ստորին օղակի հանձնաժողովներին բավարար ուղղորդում տրամադրելու համար ԿԸՀ-ն օրենքի դրույթների պարզաբանում պետք է տրամադրի պարտավորեցնող ուժ ունեցող որոշումների միջոցով:
4. Քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության արդյունավետությունն ու թափանցիկությունը բարձրացնելու համար Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը պետք է ունենա համապատասխան ռեսուրսներ, տեխնիկական փորձագիտական ուժ և անկախություն:
5. Ընտրական վեճերի լուծման համակարգի համար շատ շահեկան կլինի այն լրացուցիչ վերանայելը սույն և նախկին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցներում մատնանշված բացերի և երկիմաստությունների վերացման նպատակով, այդ թվում՝ բողոք բերելու իրավունքն ընդլայնելով և բողոքների քննման համար ողջամիտ ու բավականաչափ երկար ժամկետներ

¹⁰⁴

1999թ.-ի ԵԱՀԿ-ի Ստամբուլի փաստաթղթի 25-րդ պարբերությունում ԵԱՀԿ անդամ երկրները պարտավորություն են ստանձնել «արագ արձագանքել ԺՀՄԻԳ-ի ընտրությունների գնահատականներին ու հանձնարարականներին»:

սահմանելով: Բոլոր ընտրական բողոքները պետք է քննվեն ընտրությունների ժամանակահատվածում և նախքան ընտրությունների արդյունքների վերջնական ամփոփումը:

6. Իշխանությունները պետք է շարունակեն արդյունավետ երաշխիքներ ստեղծել ընդդեմ բազմակի քվեարկության և ի ապահովումն քվեարկության գաղտնիության, և դրանք պետք է ի գործ դնեն պատշաճ ու հետևողական կերպով: Դա կարող է լինել ընտրությունների վարչական անձնակազմի առավել խորացված ուսուցման և ընտրողների առավել թիրախային իրազեկման միջոցով, ինչպես նաև պահանջելով, որ ընտրողները տեղեկացված լինեն տեղամասերում իրենց գաղտնիության իրավունքի ու պարտավորության մասին: Հետագա քայլեր պետք է ձեռնարկվեն նաև չարտոնված անձանց կողմից քվեարկության ընթացքին միջամտելը կանխելու ուղղությամբ:
7. Ընտրական իրավունքի հավասար իրացումը երաշխավորելու համար իշխանությունները պետք է դիտարկեն ֆիզիկական հաշմանդամություն և տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար քվեարկության ընթացակարգերի հասանելիությունը մեծացնող միջոցների ձեռնարկում:

Բ. ԱՅԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Ընտրական վարչարարություն

8. ՏՀՀ ղեկավար պաշտոնների բաշխման կարգը կարող է վերանայվել դրանց անկախությունն ու անկողմնակալությունը բարձրացնելու համար:
9. ԿՀՀ-ն պետք է առավել մեծ ջանքեր ներդնի ընտրողների բոլոր խմբերի համար լայնորեն մատչելի և ընդգրկուն իրազեկման նյութեր տրամադրելու գործում՝ ներառելով տարբեր տիպի հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնություններին և հեռավոր շրջանների բնակիչներին:
10. Ընտրական ընթացակարգերի ցանկացած փոփոխություններ, որոնք առնչվում են նորագույն տեխնոլոգիաներին, պետք է համաձայնեցվեն, օրենսդրորեն կարգավորվեն, փորձարկվեն և հրապարակվեն ընտրություններից բավականաչափ ժամանակ առաջ: Ընտրություններում կիրառվող նորագույն տեխնոլոգիաների առավել մեծ թափանցիկությունն ապահովելու համար ԿՀՀ-ն մանրամասն տեխնիկական հատկորոշումների փաստաթուղթ պետք է հրապարակի և ավելի շատ տեղեկատվություն տրամադրի ընտրողներին դրանց օգտագործման վերաբերյալ:

Ընտրողների գրանցում

11. Իշխանությունները պետք է նախաձեռնողական կերպով միջոցներ ձեռնարկեն ընտրացուցակներում մուտքագրումների չարաշահումները կանխելու ուղղությամբ՝ ժամանակին հետապնդումներ իրականացնելով ընտրակեղծիքի դիմող անձանց նկատմամբ: Պետք է նաև իրականացնել միջոցների վերանայում՝ ընտրողների անհատական տվյալների պաշտպանությունը երաշխավորելու համար, մինևույն ժամանակ ապահովելով, որ անհրաժեշտ օրինաչափ դեպքերում ընտրացուցակներում ընդգրկվելու հնարավորությունը պահպանված լինի:

12. Տարբեր կառավարական մարմինների միջև համագործակցությունը՝ ուղղված ամբողջական հասցե չունեցող ընտրողների թվի կրճատմանը, պետք է շարունակվի ընտրողների տվյալների ճշգրտության հետ կապված դեռևս առկա խնդիրների լուծման նպատակով:

13. Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց քվեարկության իրավունքի սահմանափակումները պետք է վերացվեն:

Թեկնածուների գրանցում

14. Երկքաղաքացիություն ունեցող անձանց առաջադրվելու իրավունքի սահմանափակումները պետք է վերացվեն: Պետք է դիտարկել անհատ թեկնածուների առաջադրման հնարավորություն սահմանելը:

15. Պետք է դիտարկել կին թեկնածուների առաջնորդմանն ուղղված հատուկ միջոցները խթանելու հնարավորությունը: Դա կարող է իրականացվել թերևերկայացված սեռի թեկնածուներին համապետական ցուցակի առնվազն յուրաքանչյուր երկրորդ դիրքում ընդգրկելու, տարածքային ընտրական ցուցակներում կին թեկնածուների նվազագույն թիվ սահմանելու, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների նկատմամբ՝ իրենց կին թեկնածուների թիվն ավելացնելուն ուղղված խրախուսական միջոցներ կիրառելու միջոցով:

Քարոզարշավի ֆինանսավորում

16. Իրավական դաշտը պետք է հաշվետվության պահանջ սահմանի բոլոր քարոզարշավային ծախսերի, այդ թվում՝ նախընտրական շտաբերի, տրանսպորտի և հաղորդակցության կազմակերպչական ծախսերի համար:

Զանգվածային լրատվության միջոցներ

17. Հիմնվելով լրագրողների և մեդիա ՀԿ-ների հետ խորհրդակցությունների վրա՝ ՀՌԱՀ-ը պետք է անկողմնակալության և հավասար լուսաբանման պահանջների կատարման հստակ ուղենիշեր սահմանի:

18. Տարվա ընթացքում, ներառյալ քարոզարշավի ժամանակահատվածում, լրատվության, ինչպես նաև հանրային հեռարձակողի ընթացիկ հաղորդումների և բանավեճերի որակական և քանակական մշտադիտարկում իրականացնելը կարող է նպաստել վերջինիս կողմից քաղաքական և քարոզչական իրադարձությունների անկողմնակալ լուսաբանում ապահովելուն: Մշտադիտարկման արդյունքները պետք է պարբերաբար հրապարակվեն:

19. Միջոցներ պետք է ձեռնարկել լրատվամիջոցների սեփականատիրության լիարժեք թափանցիկությունն ապահովելու համար, օրինակ, լրատվամիջոցների վերջնական սեփականատերերի ինքնության հստակ հրապարակման պահանջ սահմանելու միջոցով: Լրատվամիջոցների սեփականատերերի և ֆինանսավորման աղբյուրների մասին տեղեկատվությունը պետք է մատչելի լինի հանրությանը:

20. Ընտրողներին մասնակից թեկնածուների ծրագրերը համամետելու առավել մեծ հնարավորություն ընձեռելու համար կարելի է, որպես տարբերակ, հանրային հեռարձակողից պահանջել կազմակերպել թեկնածուների քարոզարշավային բանավեճեր:

Դիմումներ և բողոքներ

21. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի ապահովման համար ԿԸՀ-ն և դատարանները պետք է լիարժեք և անկողմնակալ կերպով քննեն բողոքներն ըստ էության, գործեն անաչառ, թափանցիկ և պատշաճ իրավական գործընթացի շրջանակներում: Ճնշումների կամ ահաբեկման մասին ցանկացած հաղորդում պետք է խստորեն հետաքննվի և հետապնդվի իշխանությունների կողմից:

Ընտրությունների դիտարկում

22. Համաձայն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականների, նորաստեղծ հասարակական կազմակերպություններին ընտրությունների դիտարկում իրականացնելու արգելքի մասին դրույթը պետք է վերանայվի, իսկ դիտորդների՝ հավատարմագրման համար դիմելու վերջնաժամկետը կարելի է սահմանել ընտրությունների օրվան ավելի մոտ:

23. Իշխանությունները պետք է դիտորդներ հրավիրեն միջազգային ՀԿ-ներից և այլ համապատասխան հաստատություններից և դյուրացնեն նրանց մատչումը ընտրական գործընթացի բոլոր փուլերին՝ առանց անհարկի սահմանափակումների:

Ընտրությունների օրը

24. Պետք է միջոցներ ձեռնարկել տեղամասային կենտրոններում կուտակումներից խուսափելու համար: Կարելի է դիտարկել ժամանակի և շարժման ուսումնասիրություն իրականացնելու տարբերակը տեղամասերում ընտրողների թվի կարգավորման, բավականաչափ ընդարձակ տարածքներ գտնելու կամ տեղամասերի թիվը մեծացնելու համար:

25. Ընտրական վարչարարությունը պետք է հետևի հաշվարկի բոլոր սահմանված ընթացակարգերին և շտկի համաձայնեցման գործընթացի ժամանակ հայտանաբերված բոլոր ընթացակարգային սխալներն ու բացթողումները:

ՀԱՎԵԼՎԱԾ I: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կուսակցության/դաշինքի անվանումը	Ստացած քվեների թիվը	Ստացած քվեների տոկոսային արտահայտությունը	Տրված մանդատների թիվը	Տրված մանդատների տոկոսային արտահայտությունը
ԵԼՔ դաշինք	122,065	7.79%	9	8.57%
Ազատ դեմոկրատներ	14,739	0.94%	-	-
Հայկական վերածնունդ	58,265	3.72%	-	-
Ծառուկյան դաշինք	428,836	27.36%	31	29.52%
Կոնգրես-ՀԺԿ դաշինք	25,950	1.66%	-	-
Հայաստանի Հանրապետական կուսակցություն	770,441	49.15%	58	55.23%
Հայաստանի Կոմունիստական կուսակցություն	11,741	0.75%	-	-
ՕԲՕ դաշինք	32,508	2.07%	-	-
Հայ Հեղափոխական դաշնակցություն	103,048	6.57%	7	6.66%
ԸՆԴԱՄԵՆ՝	1,567,593	100%	105	100%

Ընտրողների ընդհանուր թիվը՝	2,588,468
Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը՝	1,575,786 (60.87%)
Անվավեր քվեաթերթիկների թիվը՝	6,675
Շրջիկ արկղով քվեարկած ընտրողների թիվը՝	2,572
Էլեկտրոնային եղանակով քվեարկած ընտրողների թիվը՝	747

(Աղբյուր՝ Կենտրոնական Ընտրական հանձնաժողովի վեբ կայք. www.elections.am)

ՀԱՎԵԼՎԱԾ II: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՑԱՆԿ

ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողով

Ignacio Sanchez Amor	Հատուկ համակարգող	Իսպանիա
Geir Jorgen Bekkevold	Պատվիրակության ղեկավար	Նորվեգիա
Judith Schwentner	պատգամավոր	Ավստրիա
Kyriakos Kyriakou Hadjiyianni	պատգամավոր	Կիպրոս
Zuzka Bebarova-Rujbrova	պատգամավոր	Չեխիայի Հանրապետություն
Jan Hornik	պատգամավոր	Չեխիայի Հանրապետություն
Ladislav Sincl	պատգամավոր	Չեխիայի Հանրապետություն
Jan Zaloudik	պատգամավոր	Չեխիայի Հանրապետություն
Kulliki Kubarsepp	պատգամավոր	Էստոնիա
Jaanus Marrandi	պատգամավոր	Էստոնիա
Kimmo Kivela	պատգամավոր	Ֆինլանդիա
Mika Raatikainen	պատգամավոր	Ֆինլանդիա
Jean-Paul Dupre	պատգամավոր	Ֆրանսիա
Thierry Mariani	պատգամավոր	Ֆրանսիա
Alain Neri	պատգամավոր	Ֆրանսիա
Michel Voisin	պատգամավոր	Ֆրանսիա
Christoph Bergner	պատգամավոր	Գերմանիա
Elvira Drobinski-Weiß	պատգամավոր	Գերմանիա
Jurgen Klimke	պատգամավոր	Գերմանիա
Tankred Schipanski	պատգամավոր	Գերմանիա
Georgios Varenos	պատգամավոր	Հունաստան
Mavroudis Voridis	պատգամավոր	Հունաստան
Sergio Divina	պատգամավոր	Իտալիա
Federico Fauttilli	պատգամավոր	Իտալիա
Guglielmo Picchi	պատգամավոր	Իտալիա
Ֆրանսիսկո Scalia	պատգամավոր	Իտալիա
Mikhail Bortnik	պատգամավոր	Ղազախստան
Barbara Bartus	պատգամավոր	Լեհաստան
Grzegorz Furgo	պատգամավոր	Լեհաստան
Malgorzata Gosiewska	պատգամավոր	Լեհաստան
Jan Lopata	պատգամավոր	Լեհաստան
Robert Mamatow	պատգամավոր	Լեհաստան
Bozena Szydłowska	պատգամավոր	Լեհաստան
Jacek Wlosowicz	պատգամավոր	Լեհաստան
Miguel Santos	պատգամավոր	Պորտուգալիա
Luis Campos Ferreira	պատգամավոր	Պորտուգալիա
Petru Movila	պատգամավոր	Ռումինիա
Gennadii Onishchenko	պատգամավոր	Ռուսաստանի դաշնություն
Artem Turov	պատգամավոր	Ռուսաստանի դաշնություն
Peter Osusky	պատգամավոր	Սլովակիա
David Carracedo	պատգամավոր	Իսպանիա
Margareta Cederfelt	պատգամավոր	Շվեդիա
Kent Harstedt	պատգամավոր	Շվեդիա
Sven-Olof Sallstrom	պատգամավոր	Շվեդիա

Anna Wallen	պատգամավոր	Շվեդիա
Simon Burns	պատգամավոր	Միացյալ թագավորություն
Anton Heinzl	պատվ. աշխատակազմի անդամ	Ավստրիա
Alex Kassegger	պատվ. աշխատակազմի անդամ	Ավստրիա
Jean-Jacques Flahaux	պատվ. աշխատակազմի անդամ	Բելգիա
Annemie Turtelboom	պատվ. աշխատակազմի անդամ	Բելգիա
Milovan Petković	պատվ. աշխատակազմի անդամ	Խորվաթիա
Silvia Demir	պատվ. աշխատակազմի անդամ	Չեխիայի Հան.
Anne-Cecile Blauwblomme-Delcroix	պատվ. աշխատակազմի անդամ	Ֆրանսիա
Georgios Champouris	պատվ. աշխատակազմի անդամ	Հունաստան
Monica Delli Priscoli	պատվ. աշխատակազմի անդամ	Իտալիա
Igors Aizstrauts	պատվ. աշխատակազմի անդամ	Լատվիա
Gunars Kutris	պատվ. աշխատակազմի անդամ	Լատվիա
Silje Arnekleiv	պատվ. աշխատակազմի անդամ	Նորվեգիա
Sergey Kareska	պատվ. աշխատակազմի անդամ	Ռուսաստանի Դաշն.
Everett Price	Պատվ. աշխատակազմի անդամ	ԱՄՆ
Bo Nielsen	ԵԱՀԿ ԽՎ քարտուղարություն	Դանիա
Loic Poulain	ԵԱՀԿ ԽՎ քարտուղարություն	Ֆրանսիա
Anna Di Domenico	ԵԱՀԿ ԽՎ քարտուղարություն	Իտալիա
Iryna Sabashuk	ԵԱՀԿ ԽՎ քարտուղարություն	Ուկրաինա

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով

Liliane Maury Pasquier	պատվիրակության ղեկավար	Շվեյցարիա
Stefan Schennach	պատգամավոր	Ավստրիա
Petra De Sutter	պատգամավոր	Բելգիա
Anne Kalmar	պատգամավոր	Ֆինլանդիա
Pascale Crozon	պատգամավոր	Ֆրանսիա
René Rouquet	պատգամավոր	Ֆրանսիա
Zviad Kvatchantiradze	պատգամավոր	Վրաստան
Volkmar Vogel	պատգամավոր	Գերմանիա
Maura Hopkins	պատգամավոր	Իռլանդիա
Adele Gambaro	պատգամավոր	Իտալիա
Nellija Kleinberga	պատգամավոր	Լատվիա
Dovilė Šakalienė	պատգամավոր	Լիտվա
Claude Adam	պատգամավոր	Լյուքսեմբուրգ
Aleksander Pociąg	պատգամավոր	Լեհաստան
Józef Leśniak	պատգամավոր	Լեհաստան
Luís Leite Ramos	պատգամավոր	Պորտուգալիա
Boriana Åberg	պատգամավոր	Շվեդիա
Pierre-Alain Fridez	պատգամավոր	Շվեյցարիա
Angela Smith	պատգամավոր	Միացյալ թագավորություն
Lord Richard Balfe	պատգամավոր	Միացյալ թագավորություն
Richard Barrett	Վենետիկի հանձնաժողով	Իռլանդիա
Simona Granata-Menghini	Վենետիկի հանձնաժողով	Իտալիա
Franck Daeschler	ԵԽԽՎ քարտուղարություն	Ֆրանսիա
Bogdan Torcătoriu	ԵԽԽՎ քարտուղարություն	Ռումինիա

Եվրոպական խորհրդարան

Heidi Hautala	պատվիրակության ղեկավար	Ֆինլանդիա
Frank Engel	պատգամավոր	Լյուքսեմբուրգ
Agnieszka Kozłowska-Rajewicz	պատգամավոր	Լեհաստան
Maria Grapini	պատգամավոր	Ռումինիա
Boris Zala	պատգամավոր	Սլովակիա
Javier Nart	պատգամավոր	Իսպանիա
Paolo Bergamaschi	աշխ. անդամ	Իտալիա
Jakub Semrau	աշխ. անդամ	Լեհաստան
Wojciech Jan Danecki	աշխ. անդամ	Լեհաստան
Julien Crampes	ԵՄ քարտուղարություն	Ֆրանսիա
Philippe Kamaris	ԵՄ քարտուղարություն	Ֆրանսիա
Pilar González-Murillo	ԵՄ քարտուղարություն	Իսպանիա

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՌԱ կարճաժամկետ դիտորդներ

Teresa Exenberger	Ավստրիա
Rudolf Wilhelm Rotter	Ավստրիա
Jan Stadler	Ավստրիա
Kseniya Stanisheuskaya	Ավստրիա
Heike Welz	Ավստրիա
Didier Audenaert	Բելգիա
Sophie Karlshausen	Բելգիա
Nadezja Uladzimirauna Zhukava	Բելգիա
Melanie Zonderman	Բելգիա
Jan Blazek	Չեխիայի Հանրապետություն
Andrea Chalupová	Չեխիայի Հանրապետություն
Alzbeta Chmelarova	Չեխիայի Հանրապետություն
Barbora Jungova	Չեխիայի Հանրապետություն
Jan Kaminek	Չեխիայի Հանրապետություն
Martin Nekola	Չեխիայի Հանրապետություն
Marketa Nekvindova	Չեխիայի Հանրապետություն
Alena Obrusnikova	Չեխիայի Հանրապետություն
Pavel Pseja	Չեխիայի Հանրապետություն
Zaneta Vencourova	Չեխիայի Հանրապետություն
Ondrej Wagner	Չեխիայի Հանրապետություն
Rasmus Fonnesbæk Andersen	Դանիա
Inge Christensen	Դանիա
Nana Sofia Hansen	Դանիա
Metere Laubjerg	Դանիա
Niels Erik Nielsen	Դանիա
Birte Torp Pedersen	Դանիա
Caroline Steiner	Դանիա
Michael Sternberg	Դանիա
Kristiina Müür	Էստոնիա
Janne Ahola	Ֆինլանդիա
Saara Johanna Ahonen	Ֆինլանդիա
Riitta Känkänen	Ֆինլանդիա
Mikko Juhani Palonkorpi	Ֆինլանդիա
Harri Juhani Saarinen	Ֆինլանդիա
Julien Arnoult	Ֆրանսիա

Jessica Berthereau	Ֆրանսիա
Marie Bertrand	Ֆրանսիա
Ekaterina Burdina	Ֆրանսիա
Emmanuelle Cerf	Ֆրանսիա
Phillippe Dardant	Ֆրանսիա
Amélie Delaroche	Ֆրանսիա
Myriam Gaume	Ֆրանսիա
Alix Genetay	Ֆրանսիա
Kilian Hocquart	Ֆրանսիա
Hala Kallas	Ֆրանսիա
Iréne Ketoff	Ֆրանսիա
Véronique Lasserre-FY	Ֆրանսիա
Alice Lena	Ֆրանսիա
Stephan Lewandowski	Ֆրանսիա
Mounia Malki	Ֆրանսիա
Salim Mejahdi	Ֆրանսիա
Catherine Pascal	Ֆրանսիա
Pascal Salagnac	Ֆրանսիա
Andrzej Wocial	Ֆրանսիա
Daniel, Bernard Zeldine	Ֆրանսիա
Jürgen Binder	Գերմանիա
Jana Buergers	Գերմանիա
Nadja Douglas	Գերմանիա
Annett Gerber	Գերմանիա
Sebastien Graefe	Գերմանիա
Siegfried Holzapfel	Գերմանիա
Dorothee Hutter	Գերմանիա
Julian Georg Jakob	Գերմանիա
Jochen Kortlaender	Գերմանիա
Kristin Liedtke	Գերմանիա
Michael Georg Link	Գերմանիա
Dorothea Luke	Գերմանիա
Evelyn Deborah Maib-Chatré	Գերմանիա
Magdalena Friederike Metzler	Գերմանիա
Maria Milzow	Գերմանիա
Wolfgang Detlef Helmut Milzow	Գերմանիա
Kerstin Roeske	Գերմանիա
Petra Ruth	Գերմանիա
Tonja Salomon-Demurray	Գերմանիա
Florian Seitz	Գերմանիա
Michael Siebert	Գերմանիա
Gudrun Steinacker	Գերմանիա
Stefan Uecker	Գերմանիա
Pavel Utitz	Գերմանիա
Judith Vorrath	Գերմանիա
Juergen Wintermeier	Գերմանիա
Heinz Bernd Wittich	Գերմանիա
Atli Isleifsson	Իսլանդիա
Selma Sif Ísfield Óskarsdóttir	Իսլանդիա

Catherine Brophy	Իռլանդիա
Peter Cotter	Իռլանդիա
Deirdre Grogan	Իռլանդիա
James McCarthy	Իռլանդիա
Theresa Reidy	Իռլանդիա
Lorenzo Cugola	Իտալիա
Claudia De Tomasso	Իտալիա
Luca Di Gennaro	Իտալիա
Samuele Dominioni	Իտալիա
Monica Ellena	Իտալիա
Astrid Ganterer	Իտալիա
Piero Iaia	Իտալիա
Carlo Imarisio	Իտալիա
Cecile Michel	Իտալիա
Valentina Palumbo	Իտալիա
Giulia Pilia	Իտալիա
Valeria Pozzessere	Իտալիա
Kenichiro Sasame	Ճապոնիա
Sawayama Toshihiro	Ճապոնիա
Takeshi Yuasa	Ճապոնիա
Kyran Orynbekov	Ղազախստան
Mels Torekeldi	Ղազախստան
Gulsana Tulepbergenova	Ղազախստան
Zhanerke Zhankuliyeva	Ղազախստան
Anna Stepanova	Լատվիա
Jurgita Banyte	Լիտվա
Mindaugas Gabrenas	Լիտվա
Tadas Kubilius	Լիտվա
Jonas Mensonas	Լիտվա
Cornelis Ros	Նիդեռլանդներ
Sanne Froukje Amittia Slagman	Նիդեռլանդներ
Henricus Van Bommel	Նիդեռլանդներ
Matthias Van Lohuizen	Նիդեռլանդներ
Vidar Birkeland	Նորվեգիա
Ragnhild Hollekim	Նորվեգիա
Nina Wessel	Նորվեգիա
Lisa Knatterud Wold	Նորվեգիա
Jan Brodowski	Լեհաստան
Ludovic Ciechanowski	Լեհաստան
Andrzej Cieszkowski	Լեհաստան
Grzegorz Cyganowski	Լեհաստան
Paulina Czarnecka	Լեհաստան
Monika Anna Dobkowska	Լեհաստան
Łukasz Jabłoński	Լեհաստան
Kaja Krawczyk	Լեհաստան
Bartłomiej Krzysztan	Լեհաստան
Arkadiusz Legiec	Լեհաստան
Dagna Lewandowska	Լեհաստան
Paulina Daria Lukawska	Լեհաստան

Pawel Nieczuja-Ostrowski	Լեհաստան
Michal Nobis	Լեհաստան
Magdalena Opalka.	Լեհաստան
Jakub Osiecki	Լեհաստան
Jakub Dobrosław Pienkowski	Լեհաստան
Ewa Marta Polak	Լեհաստան
Magdalena Polak-Zoladkiewicz	Լեհաստան
Zbigniew Grzegorz Rokita	Լեհաստան
Katarzyna Rytko	Լեհաստան
Anita Sek	Լեհաստան
Nedim Useinow	Լեհաստան
Aleksander Warwarski	Լեհաստան
Karina Zborowska	Լեհաստան
Catalina Oana Ani	Ռումինիա
Romulus Bani	Ռումինիա
Bogdan Biris	Ռումինիա
Ion Buleteanu	Ռումինիա
Alina-Stefana Catana	Ռումինիա
Octavian Alin Grebla	Ռումինիա
Maria Tudora Hagi	Ռումինիա
Alis Lungu	Ռումինիա
Miruna Nastase	Ռումինիա
Gica Onoiu	Ռումինիա
Mihaela-Ionelia Popescu	Ռումինիա
Bogdan Stefan	Ռումինիա
Ioana Udriste	Ռումինիա
Rimma Aglushevich	Ռուսաստանի Դաշնություն
Stepan Anikeev	Ռուսաստանի Դաշնություն
Ivan Artyukh	Ռուսաստանի Դաշնություն
Alexander Bedritskiy	Ռուսաստանի Դաշնություն
Konstantin Belyaev	Ռուսաստանի Դաշնություն
Kristina Bogdanova	Ռուսաստանի Դաշնություն
Yan Burlay	Ռուսաստանի Դաշնություն
Natalia Chuprakova	Ռուսաստանի Դաշնություն
Konstantin Degtyarev	Ռուսաստանի Դաշնություն
Alexey Dorovskikh	Ռուսաստանի Դաշնություն
Anna Gozhina	Ռուսաստանի Դաշնություն
Alexey Gromov	Ռուսաստանի Դաշնություն
Dmitry Groshev	Ռուսաստանի Դաշնություն
Alexander Ignatov	Ռուսաստանի Դաշնություն
Ekaterina Ivanova	Ռուսաստանի Դաշնություն
Aleksey Kerestedzhiyants	Ռուսաստանի Դաշնություն
Vasily Korchmar	Ռուսաստանի Դաշնություն
Svetlana Liapustina	Ռուսաստանի Դաշնություն
Ivan Maltsev	Ռուսաստանի Դաշնություն
Mikhail Markovets	Ռուսաստանի Դաշնություն
Roman Nikishin	Ռուսաստանի Դաշնություն
Andrei Osmakov	Ռուսաստանի Դաշնություն
Andrey Panyukhov	Ռուսաստանի Դաշնություն

Ekaterina Pavlova	Ռուսաստանի Դաշնություն
Larisa Polushina	Ռուսաստանի Դաշնություն
Aleksandr Prusov	Ռուսաստանի Դաշնություն
Aleksandr Rogov	Ռուսաստանի Դաշնություն
Stanislav Ruzhinskiy	Ռուսաստանի Դաշնություն
Gennady Ryabkov	Ռուսաստանի Դաշնություն
Natalia Shmeleva	Ռուսաստանի Դաշնություն
Vilyam Smirnov	Ռուսաստանի Դաշնություն
Konstantin Tasitc	Ռուսաստանի Դաշնություն
Svyatoslav Terentyev	Ռուսաստանի Դաշնություն
Alexander Vladychenko	Ռուսաստանի Դաշնություն
Sergei Zenkov	Ռուսաստանի Դաշնություն
Andrei Ziuzin	Ռուսաստանի Դաշնություն
Alina Zolotareva	Ռուսաստանի Դաշնություն
Maria Zots	Ռուսաստանի Դաշնություն
Juraj Pavlovic	Սլովակիա
Branislav Pochaba	Սլովակիա
Robert Podgorelec	Սլովենիա
Aleš Tadeuš Rovšnik	Սլովենիա
Sonia Andolz Rodriguez	Իսպանիա
Bruno Castro Benito	Իսպանիա
Virginia Cezilly Fernandez De Liger	Իսպանիա
Jose Luis Del Riego Santos	Իսպանիա
Pablo Desportes Bielsa	Իսպանիա
Elena Garcia Cabrera	Իսպանիա
Jaime Hermida Marina	Իսպանիա
Alberto Nuñez Sabaris	Իսպանիա
Patricia Rodriguez Diaz	Իսպանիա
Barbara Sbrogiò Bolado	Իսպանիա
Borja Vazquez Fontao	Իսպանիա
Åsa Aguayo Åkesson	Շվեդիա
Jörgen Backlund	Շվեդիա
Berndt Ekholm	Շվեդիա
Mats Ekholm	Շվեդիա
Lennart Glans	Շվեդիա
Peter Mattias Goldmann	Շվեդիա
Jan Hult	Շվեդիա
Eva Helena Jacobsson	Շվեդիա
Torsten Jaeckel	Շվեդիա
Evy Birgitta Jansson	Շվեդիա
Inger Gullevi Erica Lundtröm	Շվեդիա
Erika Mejhert Seltborg	Շվեդիա
Jan Lennart Myhlback	Շվեդիա
Daniel Olsson	Շվեդիա
Ulf Ottosson	Շվեդիա
Erik Persson	Շվեդիա
Maximo Juan Prades Barcelo	Շվեդիա
Mia Helena Rimby	Շվեդիա
Lilian Skoglund	Շվեդիա

Hans-Ivar Sward	Շվեդիա
Cecilia Tuvesson	Շվեդիա
Delphine Altwegg	Շվեյցարիա
Lucy Miganouche Baghramian	Շվեյցարիա
Claude Béglé	Շվեյցարիա
Christine Behuelin Sargenti	Շվեյցարիա
Michel Bosshard	Շվեյցարիա
Daniel Fasnacht	Շվեյցարիա
Sanovbar Luescher	Շվեյցարիա
Victor Pazinski	Շվեյցարիա
Hans Peter Portmann	Շվեյցարիա
Jon Cristian Sandi	Շվեյցարիա
Andreas Martin Speiser	Շվեյցարիա
Stefan Gerhard Ziegler	Շվեյցարիա
Mary Elizabeth Brooksbank	Միացյալ Թագավորություն
Patricia Ֆրանսիս De'ath	Միացյալ Թագավորություն
Terence Duffy	Միացյալ Թագավորություն
Helen Teresa Duncan	Միացյալ Թագավորություն
John Damian Earls	Միացյալ Թագավորություն
Alexander Folkes	Միացյալ Թագավորություն
Emily Sarah Fradgley	Միացյալ Թագավորություն
Dally Tariq Hakem	Միացյալ Թագավորություն
John Hampson	Միացյալ Թագավորություն
Dominic Rupert David Howell	Միացյալ Թագավորություն
Eleonor Kramers	Միացյալ Թագավորություն
Richard Stephen Lappin	Միացյալ Թագավորություն
Melanie Jane Leathers	Միացյալ Թագավորություն
Alan Lloyd	Միացյալ Թագավորություն
Sarah Louise Murrell	Միացյալ Թագավորություն
Michael Naughton	Միացյալ Թագավորություն
Bernard Joseph Quoroll	Միացյալ Թագավորություն
Michael David Sander	Միացյալ Թագավորություն
David Taylor	Միացյալ Թագավորություն
Maureen Christie Taylor	Միացյալ Թագավորություն
Susan Trinder	Միացյալ Թագավորություն
Christine Ward	Միացյալ Թագավորություն
Joseph Lloyd Worrall	Միացյալ Թագավորություն
Zenobia Azeem	ԱՄՆ
Howard (Jonathan) Bemis	ԱՄՆ
Somer Bessire-Briers	ԱՄՆ
Stephen Matthew Bouey	ԱՄՆ
Emily Michelle Carter	ԱՄՆ
Debra Rachel Eisenman	ԱՄՆ
Larry (Scott) Gage	ԱՄՆ
Elaine Malissa Ginnold	ԱՄՆ
Rebecca Jean Graham	ԱՄՆ
Stephen Joseph Hagerich	ԱՄՆ
Ruben Harutunian	ԱՄՆ
Robert John Hellewell	ԱՄՆ

Anna Koppel	ԱՄՆ
Frank Lavoie	ԱՄՆ
Katrina Camile Leggat	ԱՄՆ
Kathryn Marie McLaughlin	ԱՄՆ
Douglas Owen Metz	ԱՄՆ
Kelly Kristen Norton	ԱՄՆ
Molly Lyn O’Neal	ԱՄՆ
Joseph Thomas Procak JR	ԱՄՆ
Karl Freidrich Rahder	ԱՄՆ
Raphael Sambou	ԱՄՆ
Susan Marie Tatten	ԱՄՆ
Jack Warfield Van Valkenburgh	ԱՄՆ
Roman Hugh Wasilewski	ԱՄՆ
John Martin Winter	ԱՄՆ
Theodore Massey	ԱՄՆ
Seth Patch	ԱՄՆ
Brooke Nagle	ԱՄՆ

Երկարաժամկետ դիտորդներ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հիմնական թիմ

Jan Petersen	Առաքելության ղեկավար	Նորվեգիա
Kseniya Dashutina		Բելառուս
Davor Čorluka		Բոսնիա և Հերցեգովինա
Vedrana Halilović		Խորվաթիա
Lela Tsaava		Վրաստան
Elma Šehalić		Գերմանիա
Goran Petrov		Սակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետություն
Jane Kareski		Սակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետություն
Marcell Nagy		Հունգարիա
Daniela Diaconu		Ռումինիա
Svetlana Chetaikina		Ռուսաստանի Դաշնություն
Saša Pokrajac		Սերբիա
Anders Eriksson		Շվեդիա
Donald Bisson		ԱՄՆ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդներ

Christian Oliver Hynek	Ավստրիա
Markus Krottmayer	Ավստրիա
Aleš Jakubec	Չեխիայի Հանրապետություն
Marcela Mašková	Չեխիայի Հանրապետություն
Ib Kok Hansen	Դանիա
Matti Tapio Heinonen	Ֆինլանդիա
Minna Maaria Järvenpää	Ֆինլանդիա

Roman Kwiakowski	Ֆրանսիա
Cécile Polivka	Ֆրանսիա
Helmut Julius Goeser	Գերմանիա
Ulrike Christa Rockmann	Գերմանիա
Seamus Francis Martin	Իռլանդիա
Emil Shakir Uulu	Ղրղզստան
Catharina Maria Appel	Նիդեռլանդներ
Alida Jay Boye	Նորվեգիա
Eldrid Røine	Նորվեգիա
Aleksandra Jarosiewicz	Լեհաստան
Katarzyna Maria Skórzyńska	Լեհաստան
Alexander Kobrinskiy	Ռուսաստանի Դաշնություն
Sergei Kovalevskii	Ռուսաստանի Դաշնություն
Tord Birger Drugge	Շվեդիա
Tina Anna-Stina Lund	Շվեդիա
Loïc Alexis Degen	Շվեյցարիա
Alexandra Von Arx	Շվեյցարիա
Julian William Nundy	Միացյալ Թագավորություն
Mark Burnidge Waller	Միացյալ Թագավորություն
Joan Adele Brown	ԱՄՆ
Jason Ben-Doon Toy	ԱՄՆ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ՄԱՍԻՆ

Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) ԵԱՀԿ հիմնական հաստատությունն է, որը կոչված է աջակցել անդամ երկրներին «ապահովել մարդու իրավունքների և ազատությունների ամբողջական հարգումը, հաստատել օրենքի գերակայություն, զարգացնել ժողովրդավարական սկզբունքները և (...) կառուցել, ամրապնդել և պահպանել ժողովրդավարական հաստատությունները, ինչպես նաև բարձրացնել հասարակությունում հանդուրժողականությունը» (1992թ. Հելսինկյան համաժողովի փաստաթուղթ): Սա կոչվում է ԵԱՀԿ մարդու իրավունքներ:

Վարչավայում (Լեհաստան) հիմնադրված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ստեղծվել է 1990թ. Փարիզյան համաժողովում, որպես Ազատ ընտրությունների գրասենյակ, և սկսել է գործել 1991թ. մայիսից: Մեկ տարի անց, գրասենյակի անունը փոխվում է՝ մարդու իրավունքների և ժողովրդավարացման ընդլայնված լիազորություններն արտահայտելու նպատակով: Այսօր այն ունի ավելի քան 130 աշխատակից:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը Եվրոպայում **ընտրությունների դիտարկման** ոլորտում առաջատար կազմակերպություն է: Ամեն տարի այն ղեկավարում և կազմակերպում է հազարավոր դիտորդների տեղակայում՝ գնահատելու համար, թե արդյոք ԵԱՀԿ տարածքում ընտրությունները իրականացվել են ԵԱՀԿ պարտավորություններին, ժողովրդավարական ընտրությունների համար միջազգային այլ չափանիշներին և ազգային օրենսդրությանը համապատասխան: Նրա եզակի մեթոդոլոգիան հնարավորություն է ընձեռում խորությամբ ուսումնասիրել ընտրական գործընթացներն իրենց ամբողջականությամբ: Աջակցության ծրագրերի միջոցով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը օգնում է անդամ երկրներին բարեփոխել իրենց ընտրական համակարգը:

Գրասենյակի **ժողովրդավարացման** միջոցառումներն ընդգրկում են՝ օրենքի գերակայություն, իրավական աջակցություն, ժողովրդավարական կառավարում, միգրացիա ու տեղաշարժման ազատություն և զենդերային հավասարություն: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը տարեկան իրականացնում է մի շարք նպատակային աջակցության ծրագրեր՝ ցանկանալով զարգացնել ժողովրդավարական կառույցները:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը աջակցում է նաև անդամ երկրներին կատարել իրենց պարտավորությունները՝ զարգացնելու և պաշտպանելու **մարդու իրավունքները** և հիմնարար ազատությունները՝ ԵԱՀԿ մարդու իրավունքների պարտավորություններին համապատասխան: Դա նվաճվում է տարբեր գործընկերների հետ աշխատանքով՝ համագործակցությունը ուժեղացնելու, հնարավորություններ ստեղծելու համար և թեմատիկ ոլորտներում փորձաքննություն տրամադրելով, ներառյալ անհաբեկչության դեմ պայքարում մարդու իրավունքները, թրաֆիքինգի զոհերի մարդու իրավունքների պաշտպանության ընդլայնումը, մարդու իրավունքների ուսուցումը և վերապատրաստումը, մարդու իրավունքների դիտարկումը ու զեկուցումը և կանանց իրավունքները և պաշտպանությունը:

Հանդուրժողականության և խտրականության բացառման ոլորտներում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը անդամ երկրներին տրամադրում է աջակցություն՝ ուժեղացնելու աստեղծության հիման վրա հանցագործությունների և ռասիզմի, քսենոֆոբիայի, հակասեմինիստականության և անհանդուրժողականության այլ դեպքերի դեմ պայքարը: Հանդուրժողականության և խտրականության բացառման ոլորտում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ գործողությունները կենտրոնացած են հետևյալի վրա՝ օրենսդրություն, իրավապահ մարմինների վերապատրաստում, դիտարկում, զեկուցում և աստեղծության հիման վրա հանցագործություններ և դեպքերի դեմ քայլերի հետևողականություն, ինչպես նաև հանդուրժողականությունը, հարգանքը և փոխըմբռնումը բարձրացնող կրթական միջոցառումներ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն անդամ Երկրներին խորհրդատվություն է տրամադրում իրենց **«Roma and Sinti»** վերաբերյալ քաղաքականությունում: Այն աջակցում է «Roma and Sinti» համայնքների միջև կարողությունների կառուցմանը և համագործակցությանը, և խրախուսում է «Roma and Sinti» ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքականություն մշակող մարմիններում:

ԺՀՄԻԳ բոլոր միջոցառումներն իրականացվում են ԵԱՀԿ անդամ Երկրների սերտ համաձայնեցման և համագործակցության, ԵԱՀԿ կառույցների և ոլորտային աշխատանքների միջոցով, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների հետ:

Ավել տեղեկատվություն հասանելի է ԺՀՄԻԳ կայքում (www.osce.org/odihr)